Azg
Azg armenian daily

2 ՓԵՏՐՈՒԱՐ 2000 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 17 (1985)

Իվանովը վստահ է, որ «գործողությունը» շուտով կավարտվի

ՄՈՍԿՎԱ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. Չեչեն գրոհայինները հայտարարել են իրենց բոլոր ուժերը Գրոզնուց հանելու մասին: Ըստ նրանց ներկայացուցիչ Մովլադի Ուդուգովի, դա իրականացվում է վաղօրոք համաձայնեցված ոլանին համաձայնասխան: Սակայն ՌԴ նախագահի վարչակազմի ներկայացուցիչը հերքել է այդ հաղորդումը, հայտարարելով, որ Գրոզնիում մարտերը շարունակվում են: Ռուսական զորքերը Գրոզնիում ձգտում են թույլ չտալ չեչենական ջոկատների ճեղքում, որոնք նախկինի պես պաշտպանում են Գրոզնին: Ռուս զինվորականների տվյալներով, այդ կազմավորումների թվականակը հասնում է 6-8 հազար մարդու: Արդունի կիրճում իշխող բարձունքները, ուր ամրացել են չեչենական ջոկատները, ենթարկվում են ավիացիայի հրթիռառմբային հարվածների:

Ինչպես ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հետ հանդիպման ընթացքում հայտարարել է Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանովը, գործողությունը Չեչնիայում մոտենում է ավարտին:

ԴՈՆԲԱՍԵՔ

Եվրախորհրդի անդամ պարտավորությունների բեռով

Նախագահին առընթեր Անվտանգության խորհուրդը կմնարկի պայմաններ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Եվրախորհրդի քաղաքական հանձնաժողովը հունվարի 24-28-ը Ստրասբուրգում քննարկել է այն պարտավորությունների ցանկը, որը գրված է Հայաստանի առջեւ՝ իբրեւ ԵԽ լիիրավ անդամ դառնալու նախապայման: Փետրվարի 20-ին Փարիզում կկայանա քաղաքական հանձնաժողովի առաջիկա նիստը, ուր ՀՀ իշխանության բոլոր թեւերը պետք է ներկայացնեն իրենց գնահատականը առաջադրված պարտավորությունների վերաբերյալ: Հանրապետության նախագահի, ԱԺ խոսնակի եւ վարչապետի ստորագրությամբ ամրագրված Հայաստանի պատասխանից է կախված, թե արդիլի՞ն կանդամակցի արդյոք Հայաստանը ԵԽ-ին, երեկ ԱԺ-ում հայտարարեց արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը, որը գլխավորում էր ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի հայաստանյան պատվիրակությունը: Հունվարի 24-28-ը Ստրասբուրգում բանակցություններ վարել են Հմայակ Հովհաննիսյանը («Միասնություն» խմբակցություն), Արմեն Ռուստամյանը (ՀՅԴ) եւ Լեոնիդ Հակոբյանը (Հայկոմկուս): Մեր պատվիրակությունը Ստրասբուրգում քննարկել է նախ Հայաստանի անդամակցության խնդիրները եւ ապա մասնակցել խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստին:



Տես էջ 4

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հիշիր առաջին ցեղասպանությունը

Լոնդոնյան ամենալուրջ թերթերից «Դի Ինդիպենդենտը» հունվարի 28-ի համարում վերոհիշյալ վերնագրի ներքո հրատարակել է մեր ընթերցողներին ծանոթ Ռոբերտ Ֆիսքի ուշագրավ հոդվածը ցեղասպանությունների ժխտման, կասկածի ենթարկելու կամ մոռացության մատնելու հարցի շուրջ, բացառապես կենտրոնանալով 20-րդ դարի առաջին՝ հայոց ցեղասպանության վրա:

Հոդվածագիրը բաց եւ հստակ մեղադրում է Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերին, որը ոչ մի դեպքում չի հիշատակում հայոց ցեղասպանությունը, Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակին, որն անգամ Բեյրութ կատարած այցի ժամանակ սարսափում է այդ թեման արծարծելուց, Մ. Նահանգների կառավարությանը, որը ռազմատնտեսական շահերից դրդված միշտ նախընտրում է մոռանալ հայերի ցեղասպանությունը, եւ Իսրայելին, որը Թուրքիայի հետ ռազմավարական լավ հարաբերությունների սիրույն խուսափում է հայոց Հոլոքոստը հիշելուց: Այնինչ այդ բոլորը մեզ հուշում են, թե ո՞ր ցեղասպանությունը պետք է հիշատակել եւ որը՝ ոչ: Այդ է պատճառը, գրում է հոդվածագիրը, որ «Դի Ինդիպենդենտի» ոչ հայ ոչ մի ընթերցող այսօր չգիտի, թե ո՞րն է Հայոց ցեղասպանության հիշատակի օրը:

Ինչ վերաբերում է Թուրքիային, գրում է Ռոբերտ Ֆիսքը, այդ երկիրը, որը շուտով ընդունվելու է Եվրամիություն, հետեւողականորեն ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը, մինչդեռ քաղաքակիրթ աշխարհում Հոլոքոստի ժխտումը հանցագործություն է համարվում:

Վերջում հոդվածագիրը հեգնանքով արձանագրում է. «Հիտլերի ուրվականն այս օրերս ժպիծաղում է: Վերջապես, հիմա ո՞վ է հիշում հայերին»:

Հոդվածի ամբողջական թարգմանությունը՝ մեր առաջիկա համարներից մեկում:

Հայաստան մտնող գազի հոսքը դադարեցված է

Ռուսաստանը լուծում է ֆինանսակա՞ն, թե՞ քաղաքական խնդիր

«Ազգին» հայտնի դարձավ, որ երեկ պաշտոնապես հայտարարվել է գազով աշխատող հայաստանյան ձեռնարկություններին, թե նրանց գազամուղները պետք է դրոշմվեն, քանզի առժամանակ դադարեցվում է գազամատակարարումը: Գազ կտրվի միայն հատուկ նշանակության օբյեկտներին: Փաստենք, որ անցած տարեվերջին եւս Ռուսաստանը մի քանի անգամ դադարեցրեց կամ սահմանափակեց Հայաստան մուտք գործող գազի ծավալները՝ պատճառաբանելով մեր պարտքը եւ չվճարումները: Հայաստանն այս պահին, երբ ճշված չէ անգամ ընթացիկ տարվա բյուջեն, ի զորու չէ մարելու իր ֆինանսական պարտավորությունները ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի առջեւ: ԱՊՀ գագաթաժողովից հանրապետության նախագահն ու վարչապետը նոր են վերադարձել, եւ ակնհայտ է, որ Ռուսաստանն իրազեկ է մեր ֆինանսական ու տնտեսական դրությանը: Ուստի կասկած է առաջանում, որ բացի ֆինանսականից, Ռուսաստանը պարտքերի դիմաց դադարեցնելով գազամատակարարումը՝ կարող է հետամուտ լինել նաեւ քաղաքական խնդիրների:

Ն. Դ.

Օլբրայթը Մոսկվա է ժամանել Պուտինին լավ ճանաչելու համար

ՄՈՍԿՎԱ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. Եռօրյա այցով Մոսկվա ժամանած ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթը չի փորձել լրագրողներից թաքցնել իր ժամանման բուն նպատակը. ավելի լավ ծանոթանալ ՌԴ նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինին հետ, հաղորդում են Ռուսաստանի զանգվածային լրատվամիջոցները: Առայժմ «Ելցինին հաջորդողը» Վաշինգտոնում լարվածություն է հարուցում Չեչնիան հնազանդեցնելու իր եղանակներով եւ Ռուսաստանի ռազմական հզորությունը վերականգնելու անհրաժեշտության մասին բազմաթիվ հայտարարություններով: Օլբրայթը, որը Բորիս Ելցինի հրաժարականից հետո Մոսկվա ժամանած ԱՄՆ առաջին բարձրաստիճան պետական պաշտոնյան է, պետք է սեփական պատկերացում ստեղծի Վլադիմիր Պուտինի մասին, որը, ինչպես պրակտիկան ցույց է տալիս, երկար ժամանակ կարող է որոշել Կրեմլի եւ Սպիտակ տան փոխհարաբերությունները: Պուտինի եւ Օլբրայթի հանդիպումը նախատեսվում է փետրվարի 2-ին, իսկ հունվարի 31-ին ԱՄՆ պետքարտուղարը բանակցություններ է վարել Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանովի հետ:

Սպանված է նաեւ հանցագործներին Վահագնի գյուղ տեղափոխող վարորդը

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. Հունվարի 30-ին, ժամը 14.30-ին Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 24-րդ կիլոմետրի վրա, ճանապարհից 5 կմ հեռու հայտնաբերվել է Սյոռոպա Ավագյանի դիակը՝ գլխի մասում հրազենային վնասվածքներով: Ըստ ձեռք բերված տվյալների, վերջինիս վարած ՎԱԶ 21-21 մակնիշի մեքենայով են անհայտ հանցագործները հունվարի 28-ին ժամանել Լոռու մարզի Վահագնի գյուղ եւ սպանել մի ամբողջ ընտանիքի:

Կոֆի Անան. Ղարաբաղի հարցում նկատելի է առաջընթաց

ՍՏԱՍԲՈՒԼ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Կոֆի Անանը հայտարարել է, որ մեծ առաջընթաց է արձանագրվել Տաջիկստանում եւ Լեռնային Ղարաբաղում առկա հակամարտությունների կարգավորման խնդրում: «Լեռնային Ղարաբաղի հարցում պետությունների ղեկավարները ուղղակի հանդիպումներ են անցկացնում, եւ նկատելի է առաջընթաց: Մենք ակնկալում ենք, որ մոտակա ամիսներին կլսենք նոր հայտարարություն, որը կխթանի խնդրի կարգավորումը», հայտարարել է Անանը: Գլխավոր քարտուղարը նաեւ նշել է, որ ՄԱԿ-ը քանիցս է գործադրում վրաց-աբխազական դիմակայության կարգավորման նպատակով, սակայն հանգուցալուծումը ձգձգվում է:

Իրանը նշում է Իսլամական մեծ հեղափոխության 21-րդ տարեդարձը

ԹԵՀՐԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. Փետրվարի 1-ից Իրանում նշվում է Իսլամական մեծ հեղափոխության 21-րդ տարեդարձը: Ամեն տարի տոնական միջոցառումներն սկսվում են Մոսկվայի ժամանակով ժամը 9-ն անց 3 րոպե: 21 տարի առաջ հենց այդ րոպեին է գրեթե 15 տարվա տարագրությունից հետո Իրան վերադարձել այաթոլլահ Խոմեյնին: Դրանից տասն օր անց տապալվեց շահի վարչակարգը:

Ադրբեջանում ԱՄՆ նոր դեսպանն է Ռոս Ուիլսոնը

ԲԱՔՈՒ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը հրամանագիր է ստորագրել Ադրբեջանում ԱՄՆ նոր դեսպանի նշանակման մասին: Ադրբեջանում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար է դարձել Ռոս Ուիլսոնը: Ավելի վաղ Ուիլսոնը երկու անգամ աշխատել է Մոսկվայի ԱՄՆ դեսպանատանը: Իր աշխատանքային գործունեության ընթացքում Ռոս Ուիլսոնը տարբեր պաշտոններ է զբաղեցրել նաեւ Չեխոսլովակիայում եւ Ավստրալիայում ԱՄՆ-ի դեսպանատներում: Ռոս Ուիլսոնը դիվանագիտական գործունեության է անցել 1979 թվականին:

ՎԱՐԿԱՆԻՇ

«Ա1+»-ից մինչեւ «Արմենիա»

Ըստ «Մեդիա Ռիսրչ» ընկերության սոցիոլոգիական ուսումնասիրությունների

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Հայաստանի պես փոքր երկրում հեռուստաընկերություններն իրոք մեծ թիվ են կազմում: Անշուշտ գնահատելի է, որ մեր հեռուստադիտողն ընտրելու եւ իր համակրանքում ու հակակրանքում կողմնորոշվելու հնարավորություն ունի, ինչը նպաստում է ճաշակի ձեւավորմանը: Սակայն այդ ճաշակը նաեւ ինքնաբերաբար չի ձեւավորվում, այլ իրենց աշխատանքով, արհեստավարժության եւ որակի չափով ձեւավորում են նույն հեռուստաընկերությունները: Նման պատասխանատու առաքելություն ունեցող այդ լրատվամիջոցներն այսօր որքանո՞վ են գոհացնում իրենց ամենաառաջնային հնարադատին՝ շարքային հեռուստադիտողին, որի կարծիքն էլ, ի վերջո, հավասարակշիռ է, քանի որ պարունակում է հասարակայնության գնահատականը: այս հարցն էր հետաքրքրել ՀՀ կառավարության աշխատակազմի «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնին», որի պատվերով եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ էլ «Մեդիա Ռիսրչ» ընկերությունը համապատասխան հետազոտություն էր անցկացրել բնակչության շրջանում: Հետազոտությունը, որն իրականացվել էր բանավոր հարցման եւ հարցաթերթիկների լրացման ձեւով, նպատակադրված էր պարզելու հասկանալ հասարակական-քաղաքական, լրատվական-վերլուծական հեռուստածրագրերի վարկանիշը: Հարցմանը նյութ էին ծառայել 5 հեռուստաընկերություն «Ա1+»-ը, «Արմենիան», «Հ1»-ը, «Պրոմեթեւսը» եւ «ԱՐ»-ը: Առանձնացվել էին հիշյալ հեռուստաընկերությունների հենց լրատվական ու քաղաքական ծրագրերը:

Տես էջ 2

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՀԴԿ-ն առաջարկում է ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման ուրույն ճանապարհ

Երեկվա մամուլի ասուլիսում Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը ներկայացրեց «Հանրաքվեությունում ստեղծված ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու առաջնահերթ միջոցառումների մասին» ՀԴԿ առաջարկությունները, որոնք արդեն իսկ արժանացել են սոցիալիստամետ ուժերի «Աղարություն» դաշինքի մեջ միավորված կուսակցությունների հավանությանը: Մերժելով վերջին շրջանում որոշակի քաղաքական շրջանակների կողմից շահարկվող արշահերթ ընտրությունների գաղափարը, Արամ Սարգսյանը փաստեց, թե իրենք «հանրաքվեությունում իշխանության կենտրոնացում առահովելու, իշխանության թեւերի միջեւ փոխադարձ վստահությունը վերականգնելու, երկրի կառավարելիությունն ապահովելու նպատակով» նպատակահարմար են գտնում ՀՀ նախագահի հրամանագրով եւ նրա իսկ գլխավորությամբ ձեւավորել ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ «Նախագահական խորհուրդ»: Դեմոկրատների պատկերացմամբ, վերոհիշյալ խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն «Ազգային անվտանգության խորհրդի բոլոր անդամները, խորհրդարանական եւ քաղաքական ակտիվ դերակատարություն ունեցող կուսակցությունների ղեկավարներ, ճանաչված քաղաքական ու հասարակական գործիչներ» խորհրդարանական ռեժիմի նորմալացման առաջին քայլ: ՀԴԿ նախագահի կարծիքով, այս խորհուրդը պետք է ընդունի ժողովրդին ուղղված դիմում, որի մեջ հավատի «բոլոր կողմերի հավատարմությունը երկրի սահմանադրական կարգին, օրինականությանը, հնարավոր փոփոխությունները քաղաքական կոնսենսուսի միջոցով լուծելու պատրաստակամությունը, բացառելով ցանկացած ուժային պարտադրանք»: Նախագահական խորհուրդը անհապաղ պետք է ինքնակի երկրի ներքին իրավիճակի առաջնային խնդիրները, ընդունի անհրաժեշտ որոշումներ, որոնք պետք է ձեւակերպվեն ՀՀ նախագահի հրամանագրերի, հարկ եղած դեպքում Ազգային ժողովի որոշումների կամ նույնիսկ օրենքների տեսքով: Այնուհետեւ Արամ Սարգսյանը ներկայացրեց այն առաջնահերթ հարցերի ցանկը, որոնք, իր պատկերացմամբ, պետք է ինքնակի «Նախագահական խորհուրդը», դրանք դիտելով իբրեւ «երկրի քաղաքական մթնոլորտի եւ հասարակական կյանքի առողջացման նախապայման»:

Պատասխանելով լրագրողների բազմաթիվ հարցերին, ՀԴԿ նախագահը հստակ տեսնում, որ իրենց առաջարկած կառույցը «ամենեւին չի փոխարինելու» Ազգային ժողովին կամ կառավարությանը, «բնավ չի նսեմացնելու նրանց» եւ չի նմանվելու ոչ հեռու անցյալի «Քաղաքական խորհրդին» արդեն հենց թեկուզ նրանով, որ իր կազմում ունենալու է Ամ բոլոր անդամներին, այդ թվում ՀՀ նախագահին, վարչապետին, Աժ նախագահին, ուժային կառույցների ղեկավարներին, մի քանի արտախորհրդարանական կուսակցությունների ղեկավարներին եւ այլն: Այսինքն, սա կլինի ոչ թե զուտ խորհրդակցական մարմին, ինչպիսին լուծարված ՔԽ-ն էր, այլ փոխհամաձայնեցված որոշումներ կայացնելու ընդունակ կառույց:

Հաստատ կարեւորելով բնակչության սոցիալական վիճակի բարելավման հրատապ անհրաժեշտությունը, «առանց որի հնարավոր չէ պատկերացնել ներքաղաքական որեւէ կայունություն», դեմոկրատները «Նախագահական խորհրդի» քննարկելիք հարցերի մեջ առանձնահատուկ նշանակություն են տալիս տնտեսական խնդիրների լուծմանը: Մասնավորապես, առաջարկում են հատկապես Ռուսաստանի, նաեւ այլ շահագրգիռ պետությունների հետ լուծել Հայաստանում համատեղ ձեռնարկություններ ստեղծելու հարցը, «Տրանսկա» ծրագրի շրջանակներում «առանձնացնել Թեհրան-Ջուլֆա-Նախիջեւան-Երեւան-Թբիլիսի-Փոթի երկաթգծի բացումը», որով «Հայաստանը կվերացնի Նախիջեւանի շրջափակումը», ինչը Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման հարկադրված պատասխանն էր, եւ դրանով իսկ «կցուցաբերի բարի կամք ակնկալելով պատասխան քայլ Ադրբեջանից», նույն ծրագրի շրջանակներում «զուգահեռաբար աշխատանք տանել Իրանից սեւծովյան երկրներ բեռնատար ավտոտրանսպորտի հոսքը Հայաստանով տարանցելու ուղղությամբ», Եվրոպայից Պարսից ծոց բեռնահոսքերը «Հայաստանով անցկացնելու մասին մեր երկրի ավելի վաղ արած առաջարկներին ընթացք տալու հարմար Երեւանում հավիրել շահագրգիռ երկրների տրանսպորտի նախարարների խորհրդակցություն» եւ այլն:

Դեմոկրատների առաջարկների մեջ բավական հետաքրքրական են սեփականաշնորհման հետագա գործընթացի, պետության ֆինանսավարկային քաղաքականության մեջ իրավիճակից բխող փոփոխություններ կատարելու, կապիտալի միջազգային շուկայում ֆինանսական միջոցներ ձեռք բերելու, հարկային քաղաքականությունը հոգուս հայրենական արտանետարտադրողների վերանայելու եւ այլ շեշտադրումները:

Արամ Սարգսյանը նշեց, որ վերոհիշյալ առաջարկները պաշտոնապես ներկայացնելու են ՀՀ նախագահին, Աժ նախագահին, վարչապետին, քաղաքական բոլոր ուժերին, եւ հուսով են, որ նրանք «ոչ թե կձանոթանան ու մի կողմ կդնեն, այլ համապատասխան ընթացք կտան»:

ՈՍԿԻՊԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԿԻՐԲ

Հոկտեմբերի 27-ի գործի առիթով Աժ նոր լսումներ

Փետրվարի 7-ին կբացվի Աժ նոր նստաշրջանը, եւ առաջին հորդորից հետո Աժ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովը նախաձեռնում է կազմակերպել նոր խորհրդարանական լսումներ հոկտեմբերի 27-ին Աժ-ում տեղի ունեցած ահաբեկչության նախաքննության ընթացքի վերաբերյալ, «Ազգին» հայտնեց պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանը: Հանձնաժողովը դիմելու է քննությունը վարող մարմնի ղեկավար Գագիկ Ջհանգիրյանին՝ պատգամավորներին ներկայացնելու նոր զարգացումները: Նշենք, որ դեկտեմբերի 27-ին հանրապետության գլխավոր դատախազ Գագիկ Ջհանգիրյանը մասնակցեց խորհրդարանական առաջին լսումներին՝ հստակ զեկույցից հետո պատասխանելով պատգամավորների հարցերին: Փետրվարի երկրորդ կեսին նոր լսումների կազմակերպումը բավական ուշագրավ է, հանգի արդեն ավարտին է մոտենում Ռոբերտ Քոչարյանի նախկին խորհրդական եւ աշխատակազմի նախկին ղեկավար Ալեքսան Հարությունյանի կալանավորման երկամսյա ժամկետը, որից հետո նախաքննության մարմինը կամ պետք է նոր հիմնավորումներ ներկայացնի դատարանին, կամ խափանման միջոցը փոխվում է: Շեշտենք, որ այժմ մի շարք կալանավորվածների դատապաշտպանները դատական ատյաններում բողոքարկում են իրենց պաշտպանյալների խափանման միջոցը: Խոսքը հատկապես վերաբերում է Աժ պատգամավոր Մուշեղ Մովսիսյանին, որի դատապաշտպան Կոմվել Գրիգորյանը պնդում է, թե իր պաշտպանյալի առողջական վիճակն ըստ արժանվույն չի արձանագրվում, եւ նրա հանդեպ խափանման միջոցը չի փոխվում:

Ն. Դ.

Գյումրիում զոհեր՝ գազի արտահոսից

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի լույս 1-ի գիշերը, ժամը 3-անց 30 րոպեին Գյումրիի շտաբգնության կայանից ՆԳ բաժին տեղեկանք է ստացվել, որ Պուշկինի փողոցի թիվ 40 տանը բնական գազի արտահոսից մահացել է 3 մարդ, իսկ եւս 5-ը գտնվում են հիվանդանոցի վերակենդանացման բաժնում: Ինչպես ասաց ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության լրատվական բաժնի պետ Նիկոլայ Գրիգորյանը, ենթադրվում է, որ գազի ինքնաբեռն խողովակը միացված է եղել վառարանին եւ խողովակի անսարքության պատճառով տեղի է ունեցել գազի արտահոսք: Ներկայումս ճշտվում են վարկածները:

Երեւան կժամանի Ռուսաստանի ՆԳ նախարար Վլադիմիր Ռուշայլոն

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Փետրվարի 2-3-ը պաշտոնական այցով Երեւան կժամանի Ռուսաստանի ՆԳ նախարար Վլադիմիր Ռուշայլոն: Այդ մասին հաղորդեց Հայաստանի ՆԳՆ հասարակայնության եւ մամուլի հետ կապերի գծով վարչության ղեկավար Արսակ Վարդազարյանը: Ռուսաստանի ՆԳ ղեկավարը կմասնակցի ՀՀ եւ ՌԴ ՆԳՆ համատեղ կոլեգիային: Վարդազարյանի խոսքերով, ակնկալվում են մի շարք փաստաթղթերի ստորագրում: Չի բացառվում, որ Ռուսաստանի ՆԳ նախարարն այցելության ավարտից հետո մամուլի ասուլիս կանցկացնի: Ունեցած տեղեկությունների համաձայն, այս շաբաթ Վլադիմիր Ռուշայլոն կայցելի նաեւ Բաքու: Սպասվում են ահաբեկչության դեմ պայքարի առնչությամբ խնդիրների քննարկում, ինչպես նաեւ Ռուսաստանի եւ Ադրբեջանի սահմանակից շրջաններում առկա իրավիճակին վերաբերող կարծիքների փոխանակում:

Ալեքսան Բազեյանը կողմ է Երեւանի կառավարման համակարգի փոփոխության առաջարկներին

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Քաղաքական շրջանակներում քննարկվող ՀՀ Սահմանադրության փոփոխությունների՝ «Միասնություն» դաշինքի նախագծով մասնավորապես լուրջ փոփոխություններ են առաջարկվում Երեւանի կառավարման համակարգի համար: Այս հարցի պարզաբանման խնդրանքին ի պատասխան Երեւանի քաղաքապետ Ալեքսան Բազեյանն ասաց. «Երեւանի ներկա կառավարման մոդելն իրեն չի արդարացնում: Մայրաքաղաքը պետք է դիտարկել որպես մեկ միասնական համայնք, որը պետք է ունենա միասնական բյուջե եւ ավելի կենտրոնացված կառավարում: Բացի այդ, անպայման պետք է լինի ընտրվի ներկայացուցչական մարմին, որը կհաստատի բյուջեն»:

Պրն Բազեյանն ասաց, որ քաղաքական ուժերը պետք է որոշեն՝ քաղաքապետն ընտրվի՞ լինի, թե՞ ոչ: Մտավախություն կա, որ գրեթե հանրապետության կեսի չափ բնակչություն ունեցող Երեւանի քաղաքապետն ընտրվի լինելու պարագայում ինչ-որ պահի կարող է հակակշիռ դառնալ հանրապետության նախագահին:

Ա. Բազեյանը գտնում է, որ քաղաքապետի ներկայացմամբ եւ քաղաքի ընտրվի խորհրդի հաստատմամբ կարող են նշանակվել համայնքապետարանների գործադիր ղեկավարներ, որոնք կլուծեն տեղային նշանակության խնդիրներ: Ներկա պահին Երեւանի քաղաքապետարանը սեփականության սուբյեկտ չի հանդիսանում՝ քաղաքի սեփականությունը բաժանված է 12 սուբյեկտների միջեւ: Այս մասին քաղաքապետն ասաց. «Քաղաքն արհեստականորեն բաժանվել է 12 համայնքների եւ ստացել է մարզի կարգավիճակ: Եթե մարզերի համար դա ընդունելի է, ապա Երեւանի դեպքում անհասկանալի է: Այսպիսի կառավարման համակարգ որեւէ այլ երկրում չեք տեսնի»:

Եթե քաղաքական ուժերը ողջախոհ լինեն, ապա առաջարկվող այս փոփոխությունները կընդունվեն, եզրակացրեց Երեւանի քաղաքապետը:

«Ա1+»-ից մինչեւ «Արմենիա»

Սկիզբը էջ 1

«Մեդիա Ռիսրչի» տնօրեն Քրիստինե Ստեփանյանը երեկ լրագրողների առջեւ հրապարակեց ուսումնասիրության արդյունքները, հարցումն իրականացվել էր դեկտեմբերից-հունվարն ընկնող ժամանակահատվածում: Մասնակիցների թիվը 1550 էր, սակայն քանի որ սա ուսումնասիրության [illegible]ջին փուլն էր, ընդգրկվել էին լոկ [illegible]ի եւ Լոռու մարզի բնակիչները: [illegible]կացության հանգելիս կենտրոնաց[illegible]վի է առել, որ Լոռու մարզում [illegible]ածկվում են միայն ազգային [illegible]ռուսաստեսության եւ «Պրոմեթեւսի» հաղորդումները: Այսպիսով, համակրանքի ցուցանիշն, ըստ գնահատականների, տեղաբաշխվել է հետեւյալ կերպ. հարցմանը մասնակցած հեռուստադիտողների շրջանում ամենաբարձր վարկանիշի է արժանացել «Ա1+» հեռուստաընկերությունը: Վերջինի «Այբ-Բե» լրատվական ծրագիրը գնահատվել է որպես օբյեկտիվ, հետաքրքիր, իսկ քաղաքական ծրագրերը՝ «Կիրակին» եւ «Հետգրությունը», համարվել են նաեւ անկողմնակալ եւ օպերատիվ: Վարկանիշով երկրորդը «Պրոմեթեւս» հեռուստաընկերությունն է, որի հեռարձակման դաշտն էլ մի քանի անգամ ավելի ընդարձակ է: «Հեռարձակման նույնպիսի հնարավորությունների դեպքում դեռեւս հայտնի չէ, թե նույն «Ա1+»-ի վարկանիշը որքան կգերազանցի «Պրոմեթեւսին», սակայն լմանրանալով հավի ենք արել լոկ թվային պատկերը», ասաց տնօրենը: «Պրոմեթեւսի» լրատվական ծրագիրը՝ «Լուրերն», իր վարկանիշն աստիճանաբար բարձրացրել է հեռուստադիտող-մասնակիցների կողմից որպես օբյեկտիվ եւ հրապուրիչ գնահատվելու շնորհիվ, ոչ պակաս դրական է գնահատվել նաեւ «Այսօր» ծրագիրը:

«Սուրհանդակ», «Հետագիծ», «Կամ-կամ» հաղորդաշարերով եկող «ԱՐ»-ը երրորդ տեղում էր՝ օբյեկտիվության եւ անկողմնակալության գնահատականներով: Նախավերջին տեղն ազգային հեռուստատեսությունն էր, որի «Հայլուր» եւ «Օրակարգ» ծրագրերը զգալիորեն պակաս վարկանիշով էին արժեւորվել: Առավել տարածված հիմնավորում այս գնահատականին ծառայել էին հիշյալ ծրագրերի՝ կողմնակալ, իշխանամետ եւ ոչ բավականաչափ արհեստավարժ լինելու փաստարկները: Մասնանշվել էր այն բացը, որ «Հ1»-ը հիշ է անդրադառնում սոցիալական խնդիրներին: Ազգային հեռուստատեսության «Խորհրդարանական ժամ» եւ «Անմեղության կանխավարկած» հաղորդաշարերը գնահատվել էին որպես անհիշարժան, զորշ ու անհետաքրքիր: Ի դեպ, գնահատողների մեծ մասը լրատվական ու քաղաքական ծրագրերի հեռուստավարողներին որակել էր որպես ոչ արհեստավարժի, իսկ զրույց-շոուների վարողներին՝ հակառակը, արհեստավարժի:

Ամենացածր ցուցանիշն «Արմենիա» հեռուստաընկերությանն էր, որի շոու ծրագրերն, ըստ Քրիստինե Ստեփանյանի, գուցեեւ մեծ մասսայականություն են վայելում, սակայն լրատվական «ժամը» ծրագիրն ու քաղաքական-վերլուծական «Հայացք» եւ «Օրը» հաղորդաշարերն, ընդհակառակը, գնահատվել են որպես ոչ օպերատիվ, իշխանամետ եւ անհետաքրքիր: Ասուլիսի ավարտին Քրիստինե Ստեփանյանը տեղեկացրեց, որ գնահատականների մի մասն էլ հրապարակված չէ, այլ գրի է առնված եւ նախատեսված է լոկ հիշյալ 5 հեռուստաընկերությունների տնօրենների համար՝ որպես ուղեցույց վերջիններիս գործունեության աշխուժացմանն ու ընդհանուր մակարդակի բարձրացմանը:

Ինչեւէ, գնահատականները կարող են ընդունվել կամ չընդունվել, քննադատությունը՝ նույնպես, սակայն պարզ ճշմարտություն է, որ հեռուստաընկերություններն աշխատում են հեռուստալսարանի համար, ուրեմն պիտի հավի «նստեն» ներկայումս չափազանց քաղաքականացված այդ լսարանի հետ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության թ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն
Apple Macintosh / 562941
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յորումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

Այլընտրանքային զեկույցը կար, բայց ինչի՞ն էր այլընտրանք

«Միջազգային հանդիպումներին անպատրաստ ենք գնում»

Հունվարի 17-21-ը «Պեկին+5» խորագրով ժնեւում ընթացավ Արեւմտյան եւ Արեւելյան Եվրոպաների, ԱՊՀ երկրների տարածաշրջանային համաժողովը՝ պեկինյան գործողությունների եւ ծրագրերի կատարման ընթացքի ամփոփման նպատակով: Նույն ժամանակամիջոցում Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում նույն նպատակը հետապնդող համաժողով էր ընթանում ասիական տարածաշրջանների համար, ժնեւյան համաժողովը համարվել է նախապատրաստական, որովհետեւ, մասնակիցների ասելով, կազմակերպիչները մտավախություն են ունեցել, որ մարտին Նյու Յորքում տեղի ունենալիք հիմնական խորհրդաժողովին կառավարությունն ու հասարակական կազմակերպությունները պեկինյան 5 հիմնական թեմաների շուրջ հնարավոր է ընդհանուր հայտարարի չգան: Պատահական չէ, որ միջանկյալ համարվող «Պեկին+5» համաժողովի փորձաքննությունները ներկայացվել են դրվել 5 թեմաները՝ կանայք եւ տնտեսությունը, բռնություններ կանանց նկատմամբ, բռնություններ զինված հակամարտությունում, կանայք եւ որոշումների կայացումը, ինստիտուցիոնալ մեխանիզմների հիմնախնդիրները:

Սակայն մեզ համար պարզ չէ, թե ինչի շուրջ պետք է ընդհանուր հայտարարի գան Հայաստանի կառավարությունը եւ ՀԿ-ները, եթե կառավարությունը պատասխանատու զեկույցով չի ներկայացել համաժողովին: Զեկույց չի ներկայացրել նաեւ համաժողովի հավատարմագիր ունեցող միակ հասարակական կազմակերպությունը՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան: Ժնեւյան համաժողովին Հայաստանը մասնակցում էր եռաստիճան պատվիրակությամբ. ՀՀ կառավարությունը ներկայացնում էր սոցաշխատարար Ռազմիկ Մարտիրոսյանը, հասարակական կազմակերպություններից՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանը, որոնց ֆինանսավորումը հանձն էր առել ՄԱԿ-ը: Կանանց հանձնախմբերի խորհրդից (միավորում է կանանց 13 կազմակերպությունների) մասնակցել են երեքը՝ Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը, որը մասնակցել է Հայ օգնության միության ֆինանսավորումով, Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի նախագահ Սվետլանա Սալանյանը եւ «Հայ Գեն» կազմակերպության նախագահ Ռուզաննա Թամազյանը: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պատրաստած «Անցումային ժամանակաշրջանի ազդեցությունը» զեկույցը պաշտոնապես ներկայացրել է ՀՀ վիճակագրության նախկին փոխնախարար Աստղիկ Միրզախանյանը: Նրանց համատեղ մամուլի ասուլիսը տեղի ունեցավ փետրվարի 1-ին՝ ՄԱԿ-ի գրասենյակում: Աշխատել ենք ստորեւ ներկայացնել մասնակից երեք կողմերի տրամադրությունն ու տեսակետը:

«Ժնեւի խորհրդակցությունը ցույց տվեց, որ բոլոր հանրապետություններում այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են, բայց որեւէ հանրապետություն չի կարող դա ավարտված համարել, նույնը կարելի է ասել եվրոպական զարգացած երկրների համար», իր տրամադրություններն արտահայտեց ՀՀ սոցաշխատարար Ռազմիկ Մարտիրոսյանը: Նախարարը գտնում է, որ արժե այս բնագավառում որոշ հաջողություններ ու ձեռքբերումներ մտցնել, որ հասարակությունը ներդաշնակ կարողանա օգտագործել իր մարդկային ռեսուրսները՝ անկախ սեռից: Նախարարի կարծիքով, անցման շրջանում անհրաժեշտ է վարել այնպիսի քաղաքականություն, որպեսզի կանայք հնարավորություն ունենան ակտիվացնելու իրենց մասնակցությունը հասարակական-քաղաքական գործունեությանը: «Մեր նախարարությունը պատրաստ է համագործակցելու ՀԿ-ների հետ եւ աջակցելու նրանց նպատակային ծրագրերն իրագործելու համար: Ես չեմ խուսափում հասարակական գործունեությունից՝ օգնել կանանց, որպեսզի նրանք վերադարձնեն իրենց դիրքերը հասարակական-քաղաքական գործունեության մեջ: Այդ նպատակի համար ստեղծել ենք ընտանիքի, կանանց ու երեխաների վարչություն, որը փորձում է իրականացնել աշխատանքները»:

Նախարարը պարտադիր չհամարեց համաժողովում կառավարական զեկույցով հանդես գալը (տեղեկացնենք, որ Ադրբեջանն ու Վրաստանը պատասխանական զեկույց են ներկայացրել). «Սա նախապատրաստական բնույթի էր եւ հանդես չէին գալիս հաշվետու զեկույցներով: Տարածաշրջանային համաժողովում կարծիք կար, թե կառավարությունն ու ՀԿ-ները պետք է լինեն հակոտնյա, միայն այդպես կարող են ինքնահաստատվել»:

Հասարակական կազմակերպությունների տեսակետը ներկայացնող Նորա Հակոբյանը միանգամայն այլ կարծիքի էր. «Սա մի գործընթաց էր, որտեղ ուզում էին տեսնել, թե Պեկինի խորհրդաժողովից հետո ինչ է արված համայն աշխարհում, այդ թվում նաեւ մեր տարածաշրջանում»: Վերջին 10 տարում ՄԱԿ-ն այսպիսի քաղաքականություն է որդեգրել՝ կառավարական համաժողովին զուգահեռ անց է կացվում ՀԿ-ների ֆորում՝ իշխանության երկու ճյուղերի միջեւ հավասարակշռություն ստեղծելու, ինչպես նաեւ հակադիր տեսակետներին ծանոթանալու նպատակով: Ընդ որում, նախապես ընթանում է ՀԿ-ների ֆորումը, որին հաջորդում է կառավարական խորհրդակցությունը: Այդ սկզբունքով էլ համաժողովն սկսել է իր աշխատանքը, հունվարի 17-ին եւ 18-ին տեղի է ունեցել ՀԿ-ների խորհրդակցությունը, որին մասնակցել են նաեւ 4 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Կանանց համանախագահության կողմից այլընտրանքային զեկույց է ներկայացրել Նորա Հակոբյանը՝ «Պեկին-Երեւան. 5 տարի անց» խորագրով, որտեղ ներկայացված է հետպեկինյան իրավիճակը Հայաստանում: «Սա այն դեպքն էր, որ այլընտրանքային զեկույցը կար, բայց ինչի՞ց էր այլընտրանք՝ չկար», հայտնեց տկն Հակոբյանը, ավելացնելով, որ ՄԱԿ-ի զեկուցումը չի փոխարինում կառավարության զեկույցին: Ասուլիսի ժամանակ նշեց, որ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի զեկույցը համաժողովին ներկայացնելու նպատակով հրավիրված ՀՀ վիճակագրության նախկին փոխնախարար Աստղիկ Միրզախանյանն այն տեսակետին էր, որ կանայք իրենց պայքարն իրավական դաշտից պետք է տեղափոխեն տնտեսական դաշտ: Տեղեկացրեց, որ զեկույցը նվիրված էր վիճակագրությանը, որովհետեւ Հայաստանն այլ բաղա չունի, նաեւ գենդերային վիճակագրություն չունի: Առաջարկեց ստեղծել մեթոդաբանական-վերլուծական կենտրոն եւ շեշտը դնել կնոջ մրցունակության վերականգնման վրա, որպեսզի կինը վերագտնի իրեն շուկայական փուլում: ՄԱԿ-ի ներկայացրած զեկույցից մեջբերենք երկու հատված. «Կանայք Հայաստանում չունեն որոշումների կայացման գործընթացին հավասար մասնակցություն եւ ազդեցության անհրաժեշտ պայմաններ: Հայաստանում պետական քաղաքականությունը մշակվում, որոշումներն ընդունվում եւ կատարվում են տղամարդկանց կողմից, այսինքն՝ հայկական քաղաքական մշակույթում առկա փորձի, գիտելիքների, հմտությունների եւ ներուժի կեսը ներկայացված չէ կամ ընդգրկված չէ քաղաքականության մեջ: Կանանց 86 տոկոսը գտնում է, որ Հայաստանում կա բռնություն կանանց նկատմամբ»: Այս ծավալուն եւ ամփոփ զեկույցը հայերեն ու անգլերեն տարբերակներով լույս կընծայվի մոտակա ժամանակներում:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐՈՍ

Կեղծ դեղերը բացահայտելու ծրագիր

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, այս կամ այն երկրի դեղագործական շուկայում առկա դեղերի 6-60 տոկոսը կեղծված է կամ անորակ: ՀՀ առողջապահության նախարարության դեղերի եւ բժշկական տեխնիկայի գործակալության տնօրեն, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի խոսքերով, Հայաստանում ներկայումս իրականացվում է կեղծված դեղորայքի բացահայտման ծրագիր: Մշտապես վերահսկվում են դեղատներն ու մեծածախ բազաները եւ փորձագույն կասկածի դեպքում դեղորայքն ուղարկվում է որակի վերահսկողության լաբորատորիա: Գործակալության կողմից բացվել է «թեժ գիծ», որի 58-40-20 եւ 58-41-20 հեռախոսահամարներով կարող են հեռաձայնել բնակիչները կասկածներ ունենալու դեպքում:

Դժվար է ասել, թե որքան կյանք է փրկել հայ փորձագետների օպերատիվ աշխատանքը: Միայն անցյալ տարի Հայաստանի դեղագործական շուկայում բացահայտվել են ավելի քան հարյուր անուն կեղծված եւ անորակ դեղեր: Դրանք բոլորն առգրավվել են, ասաց դեղերի որակի վերահսկողության լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Ալեքսանդր Փանոսյանը:

Դպրոցներում դասերը կսկսվեն ժամը 10-ին

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 2-29-ը մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում դասերը կսկսվեն ժամը 10-ին: Այս մասին կարգադրություն է ստորագրել Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը կրթության վարչության համաձայնությամբ՝ ելնելով գրաբուն եղանակից եւ ընդառաջելով մանկավարժական կոլեկտիվների խնդրանքին:

Հսկիչ դրամարկղային մեքենաների նորամուծությունը փառավորապես տապալվեց

ՀԴՄ-ների ներդրման տարեդարձին «աշխատանք տվեց» ՀՀ վաճառականների միությունը

Երեկ ՀՀ վաճառականների միությունը, յուրօրինակ ձեւով նշելով ՀՀ կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման տարեդարձը, հավաքել էր լրագրողներին՝ թվերով ու փաստերով հիմնավորելու, որ հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման որոշումը, ինչպես մեկ տարուց ավելի հայտարարում էր միությունը, սխալ էր, ժամանակավրեպ եւ լիովին տապալվեց: «Հսկիչ դրամարկղային ցախավել», գեղարվեստական ձեւով այսպես բնութագրեց վերոհիշյալ որոշումը միության նախագահ Հովսեփ Պողոսյանը: Համեմատության իմաստը հետեւյալն էր՝ ըստ ժողովրդական ասացվածքի «աղվեսը չի կարողանում բունը մտնել, ցախավելն էլ պոչից են կապում»: ՀԴՄ-ների դեպքում հենց այդպես է: Դրանց ներդրմամբ, միության գնահատմամբ, բավական չէր, որ առեւտրի քաղաքակիրթ ձեւի խանութների համար իշխանությունները մրցակցային անհավասար պայմաններ են ստեղծել, որոշեցին նրանց այնպես վերահսկել, որ փակվելուց բացի ուրիշ այլընտրանք չունենան: Իսկ այս ամենի արդյունքը բոլորին-է ակնհայտ. խանութների մի զգալի մասը փակվել է, մյուսները, ՀԴՄ-ների ներդրման ժամանակաշրջանի համընթաց, սկզբում փոքրացվեցին 30 քառ. մետր (քանի որ, ինչպես հայտնի է, սկզբնական որոշումը վերաբերում էր միայն այդքանից ավելի քառակուսիներ ունեցող օբյեկտներին), իսկ հետո պատերից անցք բացելով դարձան կրպակներ: Ավելի համարձակներն էլ, ՀՈՄ-ներ դնելով եւ դրամական խոշոր չափերով տուգանվելու ահը աչքի առաջ ունենալով հանդերձ, հիմնականում խուսափում են կտրոններ տալուց... եւ ժողովուրդը հակառակ պետական եկամուտների նախարարության գովազդային ջանքերի, հասկանալով, թե իրականում ինչն ինչոց է, ինչպես ասում են, ըմբռնումով է մոտենում երեւույթին: Մի խոսքով ՀՈՄ-ների ներդրումից մեկ տարի անց վստահաբար կարող ենք փաստել՝ իշխանությունների նորամուծությունը փառավորապես տապալվել է:

Եթե հաշվի առնենք, որ ապրիլի մեկից սկսվելու է ՀՈՄ-ների ներդրման վերջին փուլը, երբ կրպակները, տոնավաճառները եւ վրաններն էլ կմտնեն այդ որոշման «բարդ մեխանիզմի տակ», ապա, ինչպես եւ կանխատեսում էր միությունը, շուտով ամբողջ առեւտուրը կտեղափոխվի փողոցներ: Այսինքն կառավարությունն անում է ամեն ինչ, որպեսզի վերջնականապես հրաժեշտ տրվի քաղաքակիրթ առեւտրի երազանքներին անգամ, եւ առեւտրականներին սիրում է գործել ապօրինաբար: Մեջբերենք վաճառականների միության հաշվարկներից միայն մեկ թիվ՝ հարկերը մուծելու համար օրինապահ խանութպանը ապրանքի վաճառքի գինը պետք է սահմանի 62 տոկոսով ավելի: Այդ դեպքում դժվար չէ պատկերացնել, որ խանութատերերը կամ պետք է աշխատեն օրենքների սահմաններում եւ մրցակցության չդիմանալով սնանկանան, կամ վերածվեն տեղական արտադրության եւ ներմուծվող, օրինական փաստաթղթեր ունեցող, խիստ սահմանափակ ապրանքատեսակների վաճառման օբյեկտների, կամ դառնան սպեցիֆիկ տնտեսության սուբյեկտ բաժին հանելով նաեւ տարբերություն սուղգող կազմակերպություններին: Հ. Պողոսյանի բնութագրմամբ վերջիններս, սկսած ամենահասարակ հարկային տեսչից, կարող են դառնալ որեւէ առեւտրական օբյեկտի «մահվան» պատճառ: Այսպիսով առեւտրում տիրում է քաոս, չի գործում եւ ոչ մի օրենք ու որոշում, եղածներն էլ կախված են հարկահավաքների ու մախավորների կամայականություններից, մինչ այժմ չի սահմանված նույնիսկ մանրածախ եւ մեծածախ առեւտուրը, առեւտրում խաղի կանոնները թելադրում են ոչ թե շուկան ու տնտեսվարողները, այլ չինովնիկները, որոնց ձեռնտու է ստեղծված վիճակը:

Իհարկե, վաճառականների միությունը միայն քննադատողի դերում չէ: Կան նաեւ կոնկրետ ու դեկլարատիվ առաջարկություններ եթե կառավարությունը ցանկանում է կարգ ու կանոն մտցնել առեւտրում, ապա ժամանակն է արմատապես վերանայելու տնտեսական եւ հարկային քաղաքականությունը: Առաջնահերթ կարգով պետք է ընդունվի «Առեւտրի մասին» օրենքը», որով հստակորեն պետք է սահմանվեն մեծածախ, մանրամեծածախ եւ մանրածախ առեւտուրները, մանրածախ օբյեկտների տարբերություններն ու դրանց իրավունքները, ինչպես նաեւ մրցակցային հավասար դաշտ ապահովելու պայմանները: Քանզի արդեն ՀՈՄ-ների ներդրումը այնպիսի չափերի է հասել, որ գործընթացը կանգնեցնելը բոլոր առումներով նպատակահարմար չէ, վաճառականների միությունը առաջարկում է քննարկել մանրածախ առեւտուրը շրջանառությունից հարկելու մասին միության աչքեն վաղուց արված առաջարկությունը: Դա նշանակում է ՀՈՄ-ների ներդրումը հասցնել տրամաբանական ավարտին, միաժամանակ կատարել օրենսդրական փոփոխություն՝ մանրածախ ողջ առեւտուրը հարկելով ՀՈՄ-ների ցուցմունքների հիման վրա սահմանելով իրական տոկոսադրույքներ: Ինչը իր հերթին կբերի հարկման պարզեցում, օրենքով աշխատելու իրական հնարավորություն, առեւտրից պետբյուջե մուծումների առնվազն կրկնապատկում եւ, որ ամենակարեւորն է, հայրենի պետականության եւ վաղվա օրվա նկատմամբ հավատի վերականգնում: Թե չէ ի՞նչ է տեսնվում, ուրիշ երկրներում գործարարներն են ղեկավարում, իսկ մեր երկրում քաղաքական ուժերը լիովին երկրորդական պլան են մղել այն մարդկանց, ովքեր պահում են այս երկիրը եւ աշխատում են այս երկրի համար:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Ազգային

ԱՐՑԱԽ

Նա մտավ պատմության մեջ

Հենրիկ Պողոսյան

Հենրիկ Պողոսյանի մասին ես գրել եմ դարաբաղյան շարժումն սկսվելուց դեռ շատ առաջ: Դա 1973 թվականին էր: «Դուժբա նարոդով» հանդեսի երրորդ տակում հրատարակվեց իմ «Մանկության արահետներով» ակնարկը, որտեղ պատմվում էր Հենրիկի հետ իմ հանդիպման մասին, որն այդ տարիներին Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահն էր: Մեկ տարի անց ակնարկը լույս տեսավ «Հարկավոր է տղամարդկային խոսակցություն» ժողովածուի մեջ: Բավվում աղմուկ բարձրացրին պահանջելով պատժել «Դուժբա նարոդովի» գլխավոր խմբագիր Սերգեյ Բարուզդինին: Շուտով Հենրիկին հեռացրին աշխատանքից: Այն ժամանակ ես դեռ Կամչատկայում էի եւ միամտաբար չէի կարողանում ենթադրել, թե մարդկանց ճակատագրի համար ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ ամսագրային հատուկ ակնարկը, որտեղ առաջ էր քաշվում հաղթի ջրամատակարարման խնդիրը: Քաղաք, որտեղ ես ծնվել եւ մեծացել էի, սովորել ակնարկի հերոսի հետ միեւնույն դպրոցում: Հենրիկի հետ պատահած այդ դեպքից հետո մենք հանդիպում էինք միայն արցախյան գաղտնի բնակարանում կամ Երեւանում:

«Չուստ, համեստ, սակավախոս եւ չափազանց խորհնաց մարդ» տարիներ անց նրան այսպես կբնութագրի Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավար Արկադի Վոլսկին: Հենց այդպիսին էր Հենրիկը, որին մեր հայրենակիցները նույնիսկ նրա բացակայության պայմաններում կոչում էին անուն-հայրանունով՝ Հենրիկ Անդրեեւիչ: Ես բնավ չզարմացա, երբ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի պատմական նիստում Ադրբեջանի կազմից Ղարաբաղի դուրս գալու որոշման ընդունումից եւ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեւորկովի հրաժարականից հետո մարզի ղեկավար ընտրվեց Հենրիկ Անդրեյի Պողոսյանը: Նրա խարիզմը մի տեսակ ներքին էր, աչք չէր ծակում:

Մեկ ամիս անց, արդեն մեր հերթական բացահայտ հանդիպման ժամանակ Հենրիկն ասաց. «Ժամանակն է ընտրակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ջանքեր ու միջոցներ են գործի դրել կարճ ժամկետում Ղարաբաղում գազ անցկացնելու, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին վերականգնելու, Գորիսում լենինարի դերը: Հաղթողներին չեն դատում: Բայց, ի թիվս մյուս բաների, խորհրդային ժամանակներ էին, իսկ Հենրիկը կուսակցական ղեկավար էր:

Բայց ահա եկավ կուսակցական ղեկավարի աստեղային ժամը, որը մեկ օրվա ընթացքում դարձավ Հայաստանի եւ հայության ամենաժողովրդական մարդը: Դա 1988 թ. հուլիսի 18-ն էր:

Այսօր, երբ մեր գինակիցն այլեւս չկա, կուզեի գոնե համառոտակի պատմել այդ օրվա մասին: Բայց նախ այն մասին, թե ինչ էր նախորդել այդ պատմական իրադարձությանը:

Մոսկվայում ահավոր շոգ ու հեղձուկ էր: «Մոսկվա» հյուրանոցում ես Հենրիկի հետ երկու օր շարունակ սպասում էի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության գալիք նիստում նրա ելույթի տեքստը: Նիստը վարելու էր Մ. Ս. Գորբաչովը: Հիմա, այս վերջալի ժամին, չեմ ուզում անդրադառնալ բուն տեքստին: Կարծում եմ, այս օրերին ինչպես Երեւանի, այնպես էլ Արցախի մամուլը լիովին կհրապարակի: Համենայն դեպս, մենք այն օրերին ելույթն ամբողջովին հրապարակեցինք «Սովետական Ղարաբաղ» թերթում: Կասեմ միայն, որ Հենրիկը հաճույքով կրճատում եւ խզմզում էր արդեն պատրաստի տեքստը, ընդունում խորհուրդները եւ ավելացնում իր նոր մտքերը, որոնք առավել մեծ ստություն էին տալիս ելույթին: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ բարդ ժամանակներ էին: Վարչակարգը գործում էր լրիվ թափով:

Նիստին նախորդած գիշերը մենք չքնեցինք: Առավոտյան հաղթեցորեն նախաճաշելով բոլոր դարաբաղցիներով Հենրիկին ուղեկցեցինք մինչեւ Կրեմլի Սպասկի դարպասը:

Մենք Արկադի Մանուչարովի հետ մեկնեցինք Օղակաձեւ ավտոմայրուղի՝ Չկալովի պողոտա, որտեղ բնակվում էին Անդրեյ Սախարովը եւ Ելենա Բոնները: Կար այդպիսի պայմանավորվածություն: Մոտավորապես ժամը մեկ մեզ Կրեմլից զանգահարում էր Հենրիկը: Սկզբում Ելենա Գեորգիեւնան խոսափողն ինձ էր տալիս, ապա Անդրեյ Դմիտրիեւիչն ինքն էր վերցնում զուգահեռ խոսափողը: Նա Պողոսյանին բազմաթիվ հարցեր էր տալիս եւ անընդհատ խրախուսում, որպեսզի նա չհուզվի տեքստն ընթերցելիս: Ասում էր նաեւ, որ հանգիստ լինի, երբ իրեն ընդհատեն, քանզի դա միայն Գորբաչովի սովորությունը չէ: մեր երկրում միշտ էլ այդպես է եղել: Մեկ ուրիշ անգամ Անդրեյ Դմիտրիեւիչը գովաբանեց տեքստը՝ ավելացնելով. «Կարեւորն ամբողջ տեքստը հստակորեն մինչեւ վերջ կարդալն է: Բանն այն չէ, թե ձեր ելույթը միանգամից ինչ-որ բան կփոխի: Բանն այն է, որ ելույթը գոնե փոքր-ինչ կփոխի հանրային կարծիքը: Եվս մեկ բան. հստակորեն պատասխանեք հարցերին: Դրանք շատ կլինեն եւ մեծ մասամբ ամբոխավարական բնույթ կկրեն»:

Այդ օրը մեզ երկու անգամ զանգահարեց Ռասուլ Համզատովը, որը երկար տարիներ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անդամ էր: Անդրեյ Դմիտրիեւիչը նրան եւս խորհուրդներ էր տալիս: Մասնավորապես խորհուրդ տվեց օգտվել Հենրիկ Պողոսյանի հետ եւ խրախուսել նրան:

Ուշ երեկոյան մենք կրկին Սախարովի մոտ էինք, որն անհամբերությամբ սպասում էր Պողոսյանին:

Երկու օր անց Հենրիկի հետ վերադարձանք Երեւան: Վայրէջքի պահին կենտրոնական հեռուստատեսության առաջին ծրագրով ցուցադրում էին Գխ նախագահության նիստի տեսագրությունը: Պատգամավորների սրահում մենք հաստատեցինք դիտել Հենրիկի ելույթի վերջնամասը: Այնտեղ շատ մարդ կար: Նրանք դարաբաղցի ղեկավարին դիմավորեցին բուռն ծափահարություններով:

Մեզ սպասում էին բազմաթիվ ճակատամարտեր, հատկապես Արցախի ու Հայաստանի համար ամենածանր ժամանակահատվածում, երբ ես ու Հենրիկն ամեն օր հանդիպում էինք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում: Դժվար էր չտեսնել, թե Հենրիկին ինչպիսի հարգանքով էին վերաբերվում այլ հանրապետությունների մեր գործընկեր պատգամավորները: 5 մարդուց բաղկացած դարաբաղյան պատվիրակությունը հայաստանցի պատգամավորների հետ մեկտեղ հնարավոր ամեն ինչ անում էր աղագա հաղթանակը մոտեցնելու համար, որին մասնավորապես այնքան շատ նպաստեցին պատմության մեջ մտած մեր ընկերները՝ Հենրիկ Պողոսյանը, Վաչագան Գրիգորյանը, Վահագն Գաբրիելյանը:

Ծանր հիվանդ Հենրիկ Պողոսյանին .վերջին անգամ տեսա Արցախում մի քանի ամիս առաջ: Նա հագիվ էր տեղաշարժվում: Վերհիշեցինք մեր համատեղ ապրած օրերը: Հիշողությանս մեջ տպավորվել է նրա հետեւյալ արտահայտությունը. «Պետք է հիշել, որ հաղթանակը պահպանելն առավել դժվար է»: Ես ավելացրի. «Մենք դատապարտված ենք պահպանելու»: Եվ նա ժպտաց:

Իմ տեսած վերջին բանը նրա ժպիտն էր:

ՉՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Եվրախորհրդի անդամ՝ պարտավորությունների բեռով

Նախագահին առընթեր Անվտանգության խորհուրդը կմնարկի պայմաններ

Սկիզբը էջ 1

Ռոբերտ Քոչարյանի նախաձեռնությամբ Անվտանգության խորհրդում շուտով կմնարկվի ԵՄ քաղաքական հանձնաժողովի կողմից Հայաստանին առաջարկվող պարտավորությունների ցանկը, որից հետո այդ փաստաթուղթը կառավի նաեւ հայաստանյան ազդեցիկ 5-6 կուսակցությունների, որոնց եզրակացությունների հիման վրա հնարավոր կլինի ժողովրդավարական ճանապարհով ճշտել մեր ընդհանրական դիրքորոշումը պարտավորությունների ցանկի առիթով՝ ընդունելի՞ են արդյոք այդ պայմանները մեզ համար, եթե ոչ, ապա ի՞նչ այլընտրանք կարող ենք ակնկալել: Հովհ. Հովհաննիսյանը վկայակոչեց «Ազգ» ռադեսական» կուսակցության, ՀԺԿ-ի, Կոմկուսի, ՀՅԴ-ի, ԱԺՄ-ի անունները, իբրեւ մեր քաղաքական դաշտում ամենալուրջ դեռակատարում ունեցող կուսակցություններ, որոնց կարծիքը կարող է կողմնորոշիչ լինել իշխանության թեւերի համար:

Պարտավորությունների ցանկը բաղկացած է չորս գլխից. ա) միջազգային տարբեր համաձայնագրեր, որոնց վավերացումը պարտադիր-ցանկալի է ԵՄ անդամների համար, բ) ԼՂՀ հակամարտության բնագավառում գ) ներքին օրենսդրություն եւ դ) մարդու իրավունքներ: Հովհ. Հովհաննիսյանն առայժմ ձեռնպահ մնաց պարտավորությունների ցանկն ամբողջությամբ բացահայտելուց, բայց խոստացավ, որ ԱԽ-ում եւ կուսակցություններում քննարկվելուց հետո այդ ցանկը կհրապարակվի նաեւ մամուլում: Այնուհանդերձ, **«Ազգի»** առաջարկով արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը մանրամասնեց որոշ պարտավորություններ. ամենակարեւորը՝ ԼՂՀ հակամարտության բնագավառում մեր առջեւ դրվում են հետեւյալ խնդիրները. ԼՂՀ հակամարտության կարգավորմանը հասնել բացառապես խաղաղ միջոցներով բանակցությունների ճանապարհով, բացառելով զինված որեւէ ընդհարում եւ գործադրել ԼՂ ղեկավարության ու ժողովրդի վրա համապատասխան ազդեցություն, որպեսզի ԼՂ-ում եւս բացառվի զինված ճանապարհով հակամարտության հանգուցալուծման որեւէ փորձ: Այստեղ կա մի երրորդ պայման, որ մամուլին առայժմ չբացահայտվեց:

Ներքին օրենսդրության ոլորտում ԵՄ-ն առաջ է քաշում մեզ համար ծկզբունքային, առաջարկ ընդունել ՀԱԿ-ների մասին արդիական օրենք, ընդ որում ԵՄ-ին անդամակցելուց հետո մինչեւ 1 տարի ժամկետում, պետական հեռուստատեսությունում կառավարումն իրականացնել անկախ մասնագետների խորհրդի միջոցով: Տեղական ինքնակառավարման մարմինների հաջորդ ընտրություններից առաջ ընդունել ինքնավարությունն ամրապնդող օրենք, պետական ծառայողի մասին օրենքը եւս համարվում է ԵՄ անդամակցության հիմնարար պայմաններից մեկը: Մարդու իրավունքների բնագավառում, որն ավանդաբար համարվում է ԱՊՀ երկրների աքիլլեսյան գարշապարը, ԵՄ-ն մեզ առաջարկել է բավական կասկածահարույց պայմաններ, սակայն մեր պատվիրակությունը, Հովհ. Հովհաննիսյանի հավաստմամբ, կարողացել է դիմակայել: Այսպես օրինակ, մեզ առաջարկվել է բոլոր կրոնական հոսանքների համար ապահովել անխոչընդոտ գործունեություն, երկու տարվա ընթացքում Հայաստանում կիրառել այլընտրանքային զինծառայություն, ինչպես նաեւ ապահովել ազատ գործունեություն սեռական փոքրամասնությունների համար: Մեր պատգամավորները կարողացել են վերջին պարտավորությունից ազատել Հայաստանը՝ պատճառաբանելով մեր ազգային ավանդապահ կեցվածքը, ինչ վերաբերում է հավատի ազատությանը, ապա պարտավորությունը վերաբարդվել է հետեւյալ կերպ. ոչ թե կրոնական հոսանքների, այլ միայն եկեղեցի ունեցող դավանանքների առջեւ Հայաստանը պարտավոր է բացել իր դռները:

Աշխարհաքաղաքական վտանգավոր եռանկյունում գտնվող մեր պետության համար այլընտրանքային զինծառայությունը նման է տրյական ծիու: Մեր պատվիրակությունը կարողացել է հետաձգել այլընտրանքային զինծառայության մասին օրենքի ընդունումը 4 տարով, այսինքն ԵՄ անդամ դառնալուց 4 տարի հետո Հայաստանը պարտավորվում է ունենալ այլընտրանքային զինծառայության մասին օրենք, ըստ այդմ բանակում ծառայել չկամեցողները պատշաճական իրավունք կստանան վճարելու յուրօրինակ «փրկագին»: Փաստենք, որ Վրաստանն արդեն ընդունել է այս օրենքը, եւ բանակից մեկ տարով ազատվելու վճարը սահմանված է 5 հազար դոլար: Կարծում ենք, սա բավական արդյունավետ միջոց է կանխելու նաեւ կոռուպցիան, փոխանակ վճարելու այլեւայլ պատշոնյաների, զինծառայությունից ազատվել կամեցողը կվճարի պետբյուջե: Հավատացյալների համար նախատեսվում են այլ ելքեր զինծառայության փոխարեն 2-4 տարի աշխատել մանկատանը, ծերանոցում եւ այլն:

Հովհ. Հովհաննիսյանը հստակեցրեց, թե Աշոտ Բլեյանի կամ Նիկոլ Փաշինյանի դատավարությունների պատճառով որեւէ խոչընդոտ ԵՄ-ին Հայաստանի անդամակցության ճանապարհին հարուցված չէ, եւ միայն անձնական խոսակցություններից մեկի ժամանակ շոշափվել է Աշոտ Բլեյանի խնդիրը:

Այսպիսով, մինչեւ փետրվարի 20-ը մեր պետությունը եւ ազդեցիկ կուսակցությունները պետք է հստակեցնեն իրենց դիրքորոշումը հիշյալ պարտավորությունների հանդեպ, որից հետո արդեն ԵՄ-ն կհրապարակի իր կամքը՝ Հայաստանին առաջարկել ընդունել իր կազմում, թե հետաձգել գործընթացները մինչեւ հունիս, որպեսզի Ադրբեջանի հարցերը եւս կարգավորվեն, եւ մեզ փաթեթային տարբերակով դարձնեն եվրոպական հանրության անդամ:

ԱԶԳ

Ներդրումներ

«Ներդնողները երբեք էլ հերթի չեն կանգնել Հայաստան գալու համար»

Կարծիքներ ներդնողների ու ՀՀ ներդրումային քաղաքականության մասին

«Ինչպիսին մեր երկիրն է, այնպիսին էլ նրա ներդրումային դաշտն է: Չի կարող վաս երկիրը լավ օրենսդրություն ունենալ, ինչպես նաեւ չի կարող յուրաքանչյուր արհեստականորեն ընդունված օրենք գործել», Հայաստանի ներկայիս ներդրումային մթնոլորտի մասին **«Ազգի»** հարցին ի պատասխան ասաց Հայաստանի ներդրումային ընկերություն ՊՓԲԸ գործադիր տնօրեն Կարեն Մանուկյանը: Հայաստանի ներդրումային ընկերությունն ունի արտաքին ներդնողների հետ աշխատելու մոտ մեկ տարվա փորձ: Այդ ընթացքում պրն Մանուկյանն ու իր գործընկերները ստեղծել են իրենց յուրօրինակ կարծիքը ներդրումային պասսիվության ու իշխանությունների ներդրումային քաղաքականության մասին: Նախ, պրն Մանուկյանը համաձայն չէ, որ երկրում տնտեսական ճգնաժամն ու ներդրումների հոսքի կրճատումը սկսվեց հատկապես հոկտեմբերի 27-ից հետո: «Մինչ այդ էլ ներդնողները Հայաստան գալու համար հերթի չէին կանգնել», ասաց նա: Ճիշտ է, հոկտեմբերի 27-ը ցնցող էր. երբ ոճրագործները կարող են մտնել երկրի խորհրդարան եւ գնդակահարել բարձրագույն ղեկավարներին, անպայման տվյալ երկրի նկատմամբ վստահությունը կդպասի, սակայն պատճառները շատ ավելի խորային են: Ըստ Կ. Մանուկյանի, երբ նախագահը կամ վարչապետը, կամ որեւէ նախարար անձամբ է երաշխավորում ներդրումային գործարքի հաջողությունը, դա ավելի է վանում ներդնողին: Նրան պետք է ոչ թե անձերի երաշխավորություն, այլ օրենքի: Ի վերջո, ղեկավարները փոփոխվում են, իսկ պայմանները պետք է լինեն կայուն, որ ներդնողն իր կամքով գա ու հաստատվի որեւէ երկրում: Ըստ պրն Մանուկյանի, ներդնողը, եթե անգամ սփյուռքահայ է, մուտք է գործում ու բիզնես է ծավալում մի երկրում, երբ համոզված է իր 100 տոկոսանոց շահույթի մեջ: Նրանք էլ հրեշտակներ չեն կամ սրբեր եւ ունեն իրենց կոնկրետ նպատակները եւ նրանց ոչ թե պետք է համոզել ու բերել Հայաստան, այլ ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի իրենց կամքով գան այստեղ ու փող ներդնեն: Ինչ վերաբերում է բյուրոկրատական քաշքշուկներին կամ արդեն իսկ կատարված ներդրումային ու միջազգային սեփականաշնորհման գործարքների շուրջ բարձրացված աղմուկին, ապա «Հավատացեք, որ մեզ մոտ բյուրոկրատական քաշքշուկն ավելին չէ, քան, ասենք, Գերմանիայում»: Պրն Մանուկյանը բերեց մի հատակ օրինակ. այդքան աղմուկ բարձրացվեց Երեւանի կոնյակի գործարանի սեփականաշնորհման շուրջ, բայց «հո «Պեռնո Ռիկարը» չգնա՞ց Հայաստանից»: «Պեռնո Ռիկարը» չգնաց, բայց ուրիշ «պեռնո ռիկարներ» էլ չեկան: Սա է կարեւոր խնդիրը: Մի հեռատիր դիտարկում եւս, որը հատկապես վերջերս շրջանառության մեջ են դրել որոշ տնտեսական գործիչներ. Հայաստանում լուրջ խնդիր է դարձել իշխանությունների մեկ միասնական տնտեսական քաղաքականությունը: Այստեղ ամեն ինչ իշխանությունների այս կամ այն թեւի կամ ներկայացուցչի անձնական հետաքրքրություններից է բխում: Չկա կոլեկտիվ մտածողություն: Ոչ ոք չի կարող ասել, թե այս կամ այն հարցի շուրջ իշխանությունն ամբողջովին ունի միասնական մոտեցում: Կառավարությունը մոնոլիտ չէ, հետեւաբար, ցանկացած բիզնեսի սկզբնաղբյուրը անձնական հետաքրքրություններն են: Մինչդեռ ամեն ինչ պետք է լինի համակարգային: Դա մի կարեւոր հանգամանք է, որն ամենից շատ է պետք Հայաստանին:

Ոչ թե առանձին ծրագրեր, այլ՝ կայուն համակարգ

Այս սկզբունքով է գործում նաեւ Հայաստանի ներդրումային ընկերություն ՊՓԲԸ-ն: Ի տարբերություն արդյունաբերության նախարարության կամ Զարգացման հայկական գործակալության, որոնք իրականացնում են ավելի գլոբալ ֆունկցիաներ, ձեւավորում են Հայաստանի ներդրումային վարկը, մշակում քաղաքականությունը (լավ թե վաս, այս դեպքում դա կարեւոր չէ -Գ. Մ), ընկերությունը կոնկրետանում է առանձին ծրագրերի վրա, սակայն, ըստ պրն Մանուկյանի, իրենց խնդիրը ոչ թե առանձին ծրագրեր ստեղծելն է, այլ մի համակարգ, որը կհանդիսանա վստահելի միջնորդ տեղական ձեռնարկությունների ու հավանական ներդնողների միջեւ ու շարունակաբար կգործի: Ընկերության ծրագրերից առաջինը իրականացվեց շվեյցարական «Անդրե գրուպի» եւ Լինսի հիմնադրամի հետ: Դա Հայաստանի չորս ձեռնարկություններում Արարատի, Արտաշատի եւ Արմավիրի պահածոների գործարանում ու «MAP» ձեռնարկությունում ներդրումային համալիր ծրագիրն էր: Ամբողջ վարկի մոտ 25 տոկոսը 680 հազ. դոլարը, տրամադրված ՀՀ կառավարության կողմից որպես երաշխիք, իրականացվեց ընկերության միջոցով: Վարկային ծրագիրը հաջողվեց եւ, չորս գործարաններն էլ այժմ նորմալ գործում են, ու արվում է ամեն ինչ շարունակելու համար: Մյուս խոշոր, ընթացքի մեջ գտնվող ծրագիրը իրականացվում է «Զեներալ մոթորսի» հետ: Ամերիկյան այս խոշոր կորպորացիայի հետ մոտ երկու տարի տեւած բանակցություններին **«Ազգն»** արդեն անդրադարձել է: Ինչպես հայտնի է, կորպորացիան մտադիր է Հայաստանի մի գործարանում հիմնել ոսպիկանության, շտապօգնության, աղբատար եւ այլ ծառայությունների համար նախատեսված ավտոմեքենաների արտադրություն: Օգոստոսին կատարած վերջին այցին պարզվեց, որ արդեն ընտրվել էր ձեռնարկությունը, դա ոչ թե «Երազն» է, ինչպես ենթադրվում էր, այլ Երեւանի ավտոագրեգատների գործարանը: Պրն Մանուկյանը հաստատեց չտվեց այդ ձեռնարկության անունը, միայն տեղեկացրեց, որ բիզնես-պլանն արդեն պատրաստ է եւ ներկայացվել է ամերիկյան էքսիմբանկին վարկավորման համար: Կան նաեւ ընթացքի մեջ գտնվող 20-25 ծրագրեր, որոնց վրա ընկերությունն արտասահմանյան գործընկերների հետ եռանդուն աշխատում է: Ծրագրերից մեկն, օրինակ, վերաբերում է Դիլիջանի «Իմպուլս» գործարանին, մյուսը «Լույս» արտադրական միավորմանը: Ի դեպ, արդեն գտնվել է վերջինիս պարտքերի մարման լավագույն մեխանիզմը, եւ եթե արժանանա ձեռնարկության մեծաթիվ պարտատերերի հավանությանը, նոր տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ հնարավոր կլինի մասամբ վերագործարկել այդ երբեմնի հզոր արտադրական օբյեկտը:

Մի խոսքով, ճիշտ է, որ Հայաստան գալու համար հերթի կանգնած ներդնողներ չկան, բայց կան հավանական ներդնողներ, որոնց հետ պարզապես պետք է աշխատել եւ ամենակարեւորը փոխել նրանց նկատմամբ վերաբերմունքն ու մոտեցումները: Պետք է ոչ թե համոզել, որ Հայաստանը լավն է ու ունի լավ ներդրումային դաշտ, կամ խաղալ սփյուռքահայի հայրենասիրական զգացումների հետ, այլ ուղղակի այնպիսի պայմաններ առաջարկել, որ նա համոզված լինի իր շահույթի ու կայուն եկամուտների մեջ: Այդ դեպքում էլ համոզելու կարիք չի լինի, ներդնողն իր կամքով կգա Հայաստան:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ



Հայերն էլ պետք է մշակեն նույնանման ծրագիր

Իսրայելի կառավարության հետ համագործակցելով՝ Ամերիկայում աշխատող հրեաները մի ծրագիր են մշակել, համաձայն որի յուրաքանչյուր հրեա ուսանող աշխարհի ցանկացած վայրում հնարավորություն է ունենալու ծրի այցելել Իսրայել:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում Իսրայելի կառավարությունը 70 մլն դոլար է ծախսելու՝ 10-օրյա շրջագայություններով մոտ 50 հազար հրեա ուսանողներ հայրենիք հրավիրելու համար: Ծրագրի իրականացմանը նույնքան գումար ներդնելու են 14 հրեա բարեգործներ եւ Հյուսիսային Ամերիկայի հրեական ֆեդերացիաներ: Սիգրամ ընկերության համանախագահ Չարլզ Բրոնֆմանն ու բոլշեւիկոս բանկիր Մայքլ Սթայնհարթը յուրաքանչյուրը 9 մլն դոլար է հատկացրել ծրագիրն սկսելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Իսրայել այցելությունը հրեաների ինքնության պահպանման ամենաարդյունավետ գործոնն է: Մեծ թվով հրեա ղեկավարներ լրջորեն մտահոգված են ժողովրդի հոգեւոր ժառանգության հանդեպ երիտասարդ հրեաների ցուցաբերած անտարբերությամբ: Դեպի հայրենիք ծրի ուղեւորությունը, նրանց համոզմամբ, ճիշտ ժամանակին է գալիս դիտելու հրեա ուսանողների ամենազգայուն թելերին եւ նրանցում արթնացնելու գիտակցությունն իրենց ժողովրդի հանդեպ: Հյուսիսային Ամերիկայի ուսանողներին հատկացված առաջին հինգ հազար տեղերի համար արդեն իսկ դիմել են ավելի քան 15 հազար հոգի:

Բրոնֆմանի մարդասիրական հիմնարկության հիմնական միջոցներով գործադրվող «Ծննդով ձեռք բերված իրավունք» ծրագիրը հետագայում նախատեսում է յուրաքանչյուր նորածնի հաշվին 180 դոլար ներդնել՝ հետագայում Իսրայել այցելություններն իրականացնելու համար:

Իմ կարծիքով սա խիստ կարեւոր մի ծրագիր է, որ հայ ղեկավարները պարտավոր են ընդօրինակել: Աշխարհի ամենաարբեր անկյուններում ծվարած հազարավոր հայ երիտասարդներ զրկված են իրենց արմատների հետ շոշափելի կապ հաստատելու ռեալ հնարավորությունից: Հայաստան ծրի ուղեւորությունը լավագույն խթանը կարող է հանդիսանալ հետաքրքրվելու իրենց հոգեւոր արժեքներով: Անմիջական շփումները Հայաստանում լավագույն փորձառությունները կլինեն, որոնք մշտապես կսդավորվեն նրանց մտքերում եւ հոգիներում: Իրենց նախնիների երկրում խայլելը, հայրենակիցների հետ ապրելը եւ նրանց առօրյա կյանքին մասնակից դառնալը մեծապես կփոխեն երիտասարդների մտածելակերպն ու հոգեբանությունը: Մեզանից նրանք, ովքեր այցելել են Հայաստան, ապրել են նման զգացողություն եւ գիտեն, թե դա ինչ դրական եւ բարենպաստ ազդեցություն է թողել իրենց վրա: Նույնիսկ օտարները Հայաստան այցելությունից հետո հաստատ համակրանքով կապվում են մեր երկրի եւ ժողովրդի հետ:

Ճիշտ է, ԱՄՆ-ում եւ Կանադայում որոշ հայկական հասատություններ ամռանը հայ ուսանողներին ուղարկում են Հայաստան՝ աշխատելու որոշակի ծրագրերի վրա, սակայն նրանցում ընդգրկվածների թիվը, ցավոք, խիստ սահմանափակ է համապատասխան ֆինանսների չգոյության հետեւանքով:

Հավատացած եմ, որ մի քանի հայկական կազմակերպություններ եւ բարեգործներ կարող են իրենց ներդրումներով հիմնել որոշակի մի ֆոնդ, որը կհոգար ավելի մեծ թվով երիտասարդների Հայաստան այցելության ծրագիրը: Այդ ծրագիրը կարող է հոգալ նրանց 10-օրյա այցելության եւ սննդի ծախսերը: Հայկական կառավարությունն իր հերթին կարող է կազմակերպել նրանց շրջագայությունները դեպի պատմական եւ տեսարժան վայրեր: Առավել իմաստալի եւ խնայողական դարձնելու նպատակով կարելի է նույնիսկ առաջարկել, որ երիտասարդները մնան ոչ թե հյուրանոցներում, այլ տեղացի հայրենակիցների տներում: Մինչեւ չմշակենք նման մի ծրագիր, ծուլման լայն երախները շարունակելու են կլանել մեր երիտասարդներին: Իսկ եթե մենք կորցնենք մեր հաջորդ սերունդը, ապա մեր ջանքերն ապարդյուն գործադրված ոգի լինեն: Երբ այս երիտասարդներն ավարտեն իրենց ընտրած համապատասխան ասպարեզներում: Եթե նրանք տեղյակ լինեն իրենց հոգեւոր ժառանգությանը, ապա կկարողանան նշանակալի ներդրում ունենալ իրենց հայրենիքի՝ Հայաստանի հետագա զարգացման գործում: Այնպես որ սփյուռքի գոյապահպանության օգտին եղած ներդրումները փաստորեն ներդրումներ են լինելու մեր ազգի՝ համայն հայության ապագայի օգտին:

Հրեա ղեկավարները գիտակցել են հայրենիքի հետ կապ հաստատելու նշանակությունը եւ զգալի ներդրումներ են կատարում այդ ուղղությամբ: Հայ ղեկավարները պետք է հետեւեն նրանց օրինակին:

ՏԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիերի» խմբագիր

ԱՄՆ

«Մասկոն» 4 տարում կկրկնապատկի իր կարողությունը

«Տարեվերջին «Մասկոյի» եկամուտները հասան 6,3 միլիարդ դոլարի: Չորս տարում նա կկրկնապատկի իր կարողությունը», ասում է Պոլ Բրենդիսը Նյու Յորքում գործող բանկային ներդրումների ֆիրմայի փոխնախագահն ու վերլուծաբանը: «Մասկոն» շատ լավ դիրք ունի բնակարանների վերանորոգման շուկայում»:

Վերջին քառասուն տարում Միչիգանի Թեյլոր շրջանը դարձել է խոհանոցային եւ լողասենյակային արտադրանքների համաշխարհային կենտրոններից մեկը, շնորհիվ այնտեղ տեղավորված «Մասկո» կորպորացիայի, որը 1929-ին սկսելով ծորակների արտադրությունից, այժմ դարձել է գրասենյակային եւ տնային այլ հարմարությունների գլխավոր մատակարարողը Միացյալ Նահանգներում: Հաստատության նախագահ եւ գործադիր տնօրեն Ռիչարդ Մանուկյանը որդին ազգային բարեւար եւ ՀԲԸՄ-ի երկարամյա նախագահ Ալեք Մանուկյանի, երբեք չի հանգստանում ծեռք բերածով: «Չեր 10 հազար դոլարի ներդրումը 1960-ին այժմ 40 միլիոն դոլար արժե», ասում է նա՝ բացատրելով, որ ընկերության աճը կատարվելու է ի հաշիվ հոսքային գծերի ավելացման եւ մասնագետների կատարելագործման:

Ընկերությունը հրաշալի պայմաններ է ստեղծել իր աշխատակիցների համար: Նրանց տրվում են վերապատրաստման ամենաարդիական ծրագրերը, որոնց թվում Արեւելյան Միչիգանի համալսարանի ղեկավարած արբանյակային կենտրոնի դասընթացները: Վերջիններիս միջոցով աշխատակիցները կարողանում են բարձրացնել իրենց մասնագիտական գիտելիքների մակարդակը եւ անվճար ստանալ նաեւ մագիստրոսի գիտական աստիճան: Ներկայումս ավելի քան հարյուր պաշտոնյաներ ընդգրկված են այդ ծրագրերում:

Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի տվյալների, Դետրոյթում 1929 թվին Ալեք Մանուկյանի ստեղծած առաջին գործարանն այժմ ծավալվելով, նմանատիպ գործարաններ է բացել նաեւ Միչիգանում, Թեյլորում եւ այլուր: Ընդհանուր առմամբ 31.700 հոգի են աշխատում «Մասկոյում», որոնցից 4.600-ը Միչիգանում: 1930-ին, հիմնադրումից մեկ տարի անց մայր գործարանը ծեռք է բերում 66 հազարի եկամուտ, որն էլ սկիզբ է դառնում աշխատանքների հետագա ծավալման: 1937-ին հրդեհի պատճառով գործարանը կորուստ է արձանագրում, բայց շուտով վերագտնում է իրեն եւ շարունակում բարգավաճել: «Երբ ես 1959-ին միացա գործարանի պաշտոնյաներին, մեր վաճառքի շրջանառությունը 4 միլիոն էր: Նոր տարում կազմելու է ավելի քան 7 միլիարդ դոլար», նշում է Ռիչարդ Մանուկյանը, որը նաեւ արվեստի գործերի ջերմեռանդ երկրպագու է: Ունի նկարների ընդարձակ հավաքածու եւ նախագահն է Դետրոյթի Արվեստի ինստիտուտի հիմնադիրների խորհրդի: Հոգաբարձու անդամ է ինչպես Դետրոյթի Ստեղծագործական ուսումնասիրությունների կենտրոնի, այնպես էլ Վաշինգտոնում գործող պետքարտուղարության գեղարվեստի կոմիտեի եւ Արվեստի ազգային պատկերասրահի հոգաբարձուների խորհրդի: «Ռիչարդին ճանաչում են ոչ միայն մեր երկրում, այլեւ միջազգային շրջանակներում: Նա մեծ հոգու տեր մարդասեր է եւ ունի հումորի հրաշալի զգացում», ասում է Դետրոյթի Արվեստի ինստիտուտի տնօրեն Գրեհեմ Բիլը:

Հ. Օ.

ԱԶԳ

Մշակույթ

Ժամանակի նշանները

Տասնամյակներ առաջ ճամփա ելած եւ այսօր էլ ամուր ոտքերով քայլող Հրաչյայի լրագրությունը հենց սկզբից աչքի ընկավ գրողական հասկանիքներով պատմողականություն, սյուժեայնություն, կերպարայնություն, որոնք, ըստ իս, գեղարվեստական արձակը պահող կարեւորագույն հենասյուներից են: Եվ պատահական չէ, որ այստեղ լրագրությունը յուրահանչյուր օր ընդմիջվեց պատմվածքանվելային ու վիպական էջերով եւ հակառակը գեղարվեստական պատումը հարստացավ լրագրական հայացքով ու ոճաբանությամբ: «Լրագրաբանության ավելի կամ պակաս ներկայությունը Հրաչյա Մաթեւոսյանի գեղարվեստական էջերում գրողի հայացքն է, կյանքի ընկալման կերպը, վերականությամբ ճշմարտության հասնելու մի ուղի, որ մեզ ծանոթ է հին ու նոր, հայրենի եւ օտար գրականություններից, ներառած Թումանյան եւ Բակունց:

Վերջերս լույս է տեսել Հրաչյա Մաթեւոսյանի նոր գիրք՝ «Սոլորյալ ժամ» խորագրով («Ոսկան Երեւանցի» տպագրատուն, Երեւան, 1999), որտեղ զետեղված են տասնչորս պատմվածքներ եւ «Մեր էջուէջ կյանքը» վիպակը: Ընթերցողին հասցեագրված հեղինակային ընտիր առաջաբանում, որն այս «էջուէջ» կյանքին վերաբերող երկխոսություն է իր եւ իր միջեւ, կա երկու գլխավոր շեշտադրում՝ Հեղինակը սիրո՞ւմ է նաեւ իշխանավորներին, որովհետեւ՝ իր հայերն են: Պարզապես ցավ է ապրում, որ նրանք ամեն ինչ գիտեն, փիրաքեշում են ուսելու, թալանելու, կողոպտելու արվեստին, փիրաքեշում են երկիրը օտարներին հանձնելու արվեստին, միայն չեն փիրաքեշում կառավարելու արվեստին, «Ես տագնապների մեջ եմ հացից էլ ենք հեռանում, գրից էլ»: «Սոլորյալ ժամը» ծայրեծայր ներծծված է ցավ ու տագնապով, թե ինչ է կատարվում հայ ժողովրդի եւ Հայաստան աշխարհի հետ: Եղելությունը բոլորս գիտենք, մեր սիրտն ամեն պահ գրառում է կյանքի ողբերգական ալեկոծումները, որոնց արտացոլման լավագույն հայելին, անշուշտ, գեղարվեստական արձակն է, որն ի վիճակի է կյանքի փաստերը «նկարագրել» զգացմունքներով եւ հասնել տեւական ու բարձր տպավորության:

«Պարապություն»՝ բոլորը պարապ են, գործազուրկ եւ մի զբաղմունք ունեն պարապը օգնում է պարապին իր պարապությամբ, պարապությունը դարձել է նրանց գոյության թե-թիկունքը, համընդհանուր ճակատագիրը, հաշտեցրել թշնամիներին, հարազատացրել օտարներին, ստեղծել մի նախանձելի ազգային համերաշխություն: «Պարապ-սարապ այս պատմվածքը պարապությունից դրդված գրեցի եւ սիրով նվիրում եմ նրանց, ովքեր պարապության մատնեցին աշխատող մի ժողովրդի», պատմվածքն ահա այսպիսի հեղինակային ընծայագիր ունի: Հրաչյայի հայացքը բռնում է տխուր կյանքի արմատները, սիրտը ցավում է, արտասվում, նա ապրում է կատակերգություն եւ դրամա, որ նաեւ մեր ողբերգակատակերգությունն է:

Վարագիրը երազում է բարձր իշխանավորների գլուխներ սարքել վարչապետների, նախարարների, օրինակ, ինչո՞ւ չսարքի Տերհուսիկի գլուխը: «Այ միասիս,- ասում են նրան,- նրանք գլուխ չունեն... Դու քո ժողովրդի գլխի հետ գործ բռնիր... Բայց, դե, ժողովուրդն էլ, որ գլուխ ունենար, նրանց իր գլխին չէր նստեցնի...»: Ժողովրդին անգամ տեղին ու ճշմարիտ ներկայացնելը վտանգավոր է, հատկապես ծակ ժողովրդասերները եւ ավելի քան ծակ-փուչիկ հայրենասերները սուր կծոնեն քո դեմ, Հրաչյան չի վախենում նրանցից, որովհետեւ նա ժողովրդի ու հայրենիքի նկատմամբ տածում է բարձր-անանձնական սեր, ոչ ինքնագովազդային, ինչպես ոմանք մեր «մտավորական» շրջանակներից, այդ կապույտ սերը նրա մեջ մարդկային անփոխարինելի արժեք է, որը նրան բարոյական իրավունք եւ ազատություն է տալիս սրտի ցավով, շեշտում եմ ցավով եւ ոչ ծաղրուծանակով, հարազատ ժողովրդին ասելու աչքիդ վերեւ հոնք կա, մարդիր եւ ազգովին մարդենք ու առողջանանք:

Պատմվածքագիրն ստեղծագործում է գլխավոր դեր է կատարում Հրաչյա Մաթեւոսյանի պատումները, այն ցուցադրում է կերպարն ու գաղափարը, այն միջոց չէ, ստեղծագործության ենթավարագույր կամ պասսիվ շերտ, այլ էական արժեք: «Պեսապաշտոնական գործողություններ» պատմվածքում նախարարների հեռախոսային երկխոսություններն են, գոյություն ունի մեկընդմիշտ կաղապարված ելույթի տեսք, որն անցնում է ձեռքից ձեռք եւ նրանց կողմից ընթերցվում տարբեր երկրներում, միայն փոխվում են երկրների ու ժողովուրդների անունները: Իսկապես մերկացնող պատկերագաղափարական հեռագծով, երեւույթն արտացոլող հայելի, որը չափով ծուռ ու չափազանցված, սակայն ճշմարիտ:

Հրաչյան հակված է գրոտեսկին՝ թե պատումաձեւով եւ թե վիճակների բացահայտմամբ, նա ոչ թե փոխարկում է ճշմարտությունը, ինչպես որոշ գրողներ իրենք էլ փոխրանալով, այլ խոշորացնում, մեկ ճշմարտությունը դարձնում շատ ու բազմաբնույթ: Այս հայեցության փայլուն օրինակ է 1998 թ. գրված «Իշխանավորական ջանք» երգիծապատումը: Հանրապետության նախագահը մի անանունից նամակ է ստանում՝ Հովհաննես Թումանյանի «Գութանի երգը» բանաստեղծության սոցիալական դժգոհություններով ու բողոքներով, սակայն չգիտի, որ դժգոհ նամակագիրը՝ Թումանյան-Մաթեւոսյանն է, եւ իր վարչապետին կարգադրում է օտար պարզել նրա իսկությունը եւ նամակում բարձրացված հարցերին լուծում տալ: Նամակում՝ «կա քաղաք եզը, ճիպտին անող հոտաղ... հոտաղի հետ մատաղ կա... Շատ բան կա... պարտքերը գանգատ է գնացել... Քյոխվեն կգա, կծեծի... Առանց ծեծի հնարավո՞ր չէ հարց լուծել... Սերժին ասա, թող առաջն առնի... Ամեն ինչ պետք է դնել օրինական դաշտի վրա... Տերտերն օրհնել է, նրան վարձն էլ չեն տվել: Վտանգ կա, որ տերտերը կբարկանա, կանիծի: Տերտերին չի՝ կարելի բարկացնել... էն օրն եկել թովջի են արել... էս բառը դրեք շրջանառության մեջ: Թովջի անել՝ Պետության, տերության հարկն են ուզում: Դա գեղեցիկ արարողություն է... Բայց կասկածում եմ, որ որոշ մութ ուժեր պետության հարկի անվան տակ թովջի անեն... որ կազդի անկախության ուղին բռնած մեր հանրապետության վարկանիշի վրա... Չեռքս հատած, ուժքս հատած, հազար ու մի ցավի տեր... Մեր սեւ օրին ճար անենք...» եւ այլն: Վարչապետն այս հարցերով պիտի դիմի իր համապատասխան նախարարներին: Հարյուր տարի առաջ գրված բանաստեղծության մեջ բերումներով Հրաչյա Մաթեւոսյանն այնքան իրատեսորեն պատկերում է ժողովրդի ներկայիս դրությունը՝ նույն «թովջին» է, մարդիկ «հազար ու մի ցավի տեր», եւ հույս չկա, թե «մեր սեւ օրին ճար» կարվի:

«Պարապություն» պատմվածքին ձեռք է մեկնում «Համբերե՞, հոգիս, համբերե՞...» պատմվածքը իր ավելի տխուր եւ դրամատիկ էությամբ: Գլխավոր հերոսը, որի անունը Մարդ է, այսինքն բյուր մարդկանց հավաքականություն, ժողովուրդ, դատապարտված է համբերելու իր կյանքի տառապանքները: «Մենք ծնվել ենք համբերության համար»: Հայ մարդն ուրիշ ոչինչ չունի, պարտավոր է համբերել, նա պիտի տաղանդ ունենա իր մեջ համբերության նոր պաշարներ հայտնաբերելու: Պատմվածքի սյուժեն այդ հայտնաբերության ընթացքն է: Հերոսի միակ մտահոգությունը՝ հանկարծ պաշարները չսպառվեն:

Ամբողջ պատմվածաշարն արտահայտում է մեր «էջուէջ» կյանքը: Եվ միանգամայն տրամաբանական է շարքին թե գրքում եւ թե ժամանակագրորեն հաջորդած «Մեր էջուէջ կյանքը» վիպակի ներկայությունը (1999 թ.): Վիպակն էջի առուծախի պատմությունն է, հերոսը մի էջ է գնում եւ նվիրում հորը, դա «պատմական» իրադարձություն է դառնում գյուղում եւ մայրաքաղաքում, այնքան նշանակալից, որ մոռացվում են կյանքի շատ ասպարեզներ, որովհետեւ «մենք բոլորս ապրում ենք էջացած կյանքով»: Հեղինակի ծաղր ու ծիծաղից դառնաղի արցունք է կաթում: «Առաղն ու ծխախոտը ժամանակավոր են, էջն է հավերժականը... է՞ի կերպարը հավերժական է»: Ասես անհնարին է ազատվել էջից ու էջությունից, «Վիճակ է, ընկել ենք, պիտի քաշենք ու քաշենք»: Ուրեմն, վիպակը հրաշք էջի մասին չէ եւ ոչ էլ նրա առուծախի, այլ այս վարագույրի ետեւում, մեր «էջուէջ» իրականության:

Գրող Հրաչյա Մաթեւոսյանն իր պատմվածքներում եւ վիպակում նաեւ ֆելիետոնիստ է, հրապարակագիր, ինքնադաս, դասապարակ, հեռու ամեն քաղաքականությունից, քաղաքականազերծ, փոխարենը ազգամետ, աղբողներիս ցավերը սրտում եւ լեզվի վրա, որը խոսում է ընտիր, պարզ-ժողովրդական հայերենով, արտահայտում բառի թե երգիծական եւ թե դրամատիկական հնչեղանգները, չի սեթեւեթում, չի խաղում եթե նույնիսկ օգտագործում է գրական-գեղարվեստական «խաղաթուղթ», նրա գրքում մեր ժամանակի սոցիալական, բարոյական, հասարակական բնորոշ նշանները, խորհրդանիշները ու ծայները, մենք այնպես, ինչպես կանք: «Սոլորյալ ժամը» արտաքուստ եւ ներքին շերտերով մեզ ճանաչելի է դարձնում մեր սոլորյալ ժամանակը, նաեւ այս հիմունքով հետաքրքիր ու արժեքավոր:

ՆՈՐԱՅՐ ԱՂԱԼԵՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄՈԼՈՐՅԱԼ ԺԱՄ

ԵՐԵՎԱՆ, 1999

ՀԱՆՃԱՐՆԵՐԻՆ՝ Ի ՄԵՐՁ

Քամյուի առասպելը

Զգացողությունների մոտենալու փորձ

Ո՞րն է տիեզերքում իրերի ճշգրիտ դասավորությունը, ո՞րն է ճշմարտությունը եւ ո՞րն է սուտը, մենք մեզ արդյոք չե՞նք խաբում եւ չե՞նք խաբում ուրիշներին... Անհեթեթությունների այս ողջ խառնաշփոթի մեջ 1960 թ. ծմեռային մի ցուրտ օր ավտովթարին պետք է զոհ գնար Նոբելյան մրցանակի ամենաերիտասարդ դափնեկիրներից մեկը՝ Ալբեր Քամյուն, որպեսզի մարդկությունը կրկին զգար իրերի եւ երեւույթների անհեթեթությունը, զգար ցավով: Եվ եթե կար մի պարզ ճշմարտություն՝ անհեթեթությունների աշխարհի արարչի մահն էր: Ամեն ինչ վերջացա՞վ: Ոչ, ավելի շուտ սկսվեց:

1957 թ. Նոբելյան մրցանակ ստանալիս (այդ ժամանակ Քամյուն ընդամենը 44 տարեկան էր) նա խոստովանում է. «Երբ ես սկսեցի իմ գրական գործունեությունը, որոշակի նպատակներ ունեի. նախ ուզում էի արտահայտել իմ ժխտողական դիրքորոշումը, այն էլ երեք ժանրով. վիպակ՝ «Օտարականը», թատերակ՝ «Կալիգուլան», «Թյուրիմացությունը», գաղափարակ՝ «Սիզիփոսի առասպելը»: Բայց սա դեկարտյան կեցվածք էր, զգում էի, որ բացասմամբ գոյատեւել չի կարելի: Ես իմ դրական կեցվածքն արտահայտեցի դարձյալ երեք ժանրով. վիպակ՝ «Ժանտախտը», թատերգակ՝ «Պաշարման վիճակն» ու «Արդարները», գաղափարակ՝ «Ընդվզող մարդը»...

Տիեզերքի եւ մարդու-ճանաչման իսկայական փորձ նա պետք է ձեռք բերեր կարճ ժամանակում: Տիփազայում նա վայելեց կյանքը, խանգի արեւից, համբույրներից ու վայրի բուրմունքներից զատ նրան ամեն ինչ ծղճիմ էր թվում: Բայց հասավ նաեւ «Օտարականի» ժամանակը: 1940 թ. վեցն արդեն գրված էր: Ամենաազատ մտածողություն ունեցող ֆրանսիական գրականագիտությունն անգամ ափոքահար էր. մարդը պատկերված էր այնպես, ինչպես կա, ինչպես կարող է լինել՝ առանց խաբուսիկ ծածկոցների: Դա տարտեցնում էր այնպես, ինչպես Վագների երաժշտությունը, ինչպես իմպրեսիոնիստների նկարները, ինչպես Գոգենի Թահիթյան շարքը: Այս ենք, ոչ՝ ավելին, ոչ՝ պակաս: Մեր խեղճությամբ ու մեր հզորությամբ, մեր բուլությունքներով ու ոգեղեն թռիչքներով: Դժվար էր ընդունել Քամյուի հերոսին, առավել եւս որ այդ հերոսը մենք էինք՝ առանց ծածկույթի:

Այնուհետեւ գրվեց «Սիզիփոսի առասպելը» ավելի շատ փիլիսոփայական մտորումների շարք, որտեղ փորձ է արվում իրականությունը զատել աբսուրդից (անհեթեթությունից): Քամյուն հայտնագործություն չի անում, երբ շատ ժամանակ կյանքն անիմաստ է դառնում, եւ մարդը փորձում է հեռանալ կյանքից ինքնասպանություն գործելով: «Մարդիկ անձնասպան են լինում, որովհետեւ չեն ուզում ապրել՝ սա, անկասկած, ճշմարտություն է, բայց ստեղծ ճշմարտություն, տուիզմ: Մի՞թե հենց դրանով կյանքին հասցված վիրավորանքից, կեղծ լինելը բացահայտելուց կարելի է հեռացնել, որ այն իմաստ չունի: Մի՞թե կյանքի աբսուրդ լինելը մեզ ստիպում է հույսի՝ կամ ինքնասպանության միջոցով խույս տալ նրանից, մնացած ամեն ինչը մի կողմ թողնելով սա պետք է ենթադրել, պարզաբանել, բացահայտել»: Ոչ, ասում է Քամյուն եւ կրկին անգամ ասում՝ ոչ: Մարդու կյանքը շատ ավելի բարդ է, քան կարող է երեւալ խոսքի, մտքի, անգամ արարքների եւ գործողությունների տեսքով: Զգացողությունների մասին ենք հաճախ մոռանում, այնպիսի հզոր զգացողությունների, որոնց ենթարկվում են մեր հոգին ու մեր մարմինը: Մարդկային խոսքն անկարար է բարգմանելու այդ զգացողությունները: Թող հարյուր հազար երաժշտագետ մեկ միլիոն գիտական աշխատանք գրի Բախի խորալների մասին, նույնքան արվեստագետ էլ փորձի բացատրել Սեզանին կամ Այորեին: Ոչինչ էլ չի ասի: Անգամ պարզունակ ականջն ու աչքը շատ ա-

վելին են լսում ու տեսնում, շատ ավելի մեծ զգացողությունների են ենթարկվում: Ամեն ակնթարթ, ամեն ժամ, ամեն օր տիեզերքը փոխվում է եւ նոր ընկալումներ ծնում:

Եվ բնական է Քամյուի հրաժարանքը Ֆրանց Կաֆկայով՝ աբսուրդ գրականության այդ հսկայով, որի գործերում մարդը միշտ անբացատրելի վիճակներում է: Սակայն անբացատրելի է միայն այն դեպքում, երբ մենք չենք կարող կամ չենք ցանկանում լարել մեր միտքը, որկել՝ պարզ ճշմարտությունները բնական վիճակով հասկանալու համար, բնականոն բացատրելու համար: Այս դեպքում, ահա, ամեն ինչ դառնում է անհեթեթություն (աբսուրդ):

Կյանքը կրքոտ սիրելու համար Սիզիփոսը դատապարտվեց ահավոր տանջանքների. նա զբաղվում է մի գործով, որը ոչ վերջ ունի, ոչ էլ իմաստ: Սա նախազգուշացումն է: Քամյուն չի ուզում մարդուն տեսնել որպես Սիզիփոս, Քամյուն ցանկանում է փրկել մարդուն: Իսկ նրան փրկելու համար մի ճանապարհ կա. մարդը պետք է ինքն իրեն, պետք է հասակ ճանաչի իր զգացողությունները: Սիզիփոսի աշխատանքն է արել Քամյուն: Չգիտեմ...

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Լուվրը օր է նվիրել հայ արվեստին ու պատմությանը

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ «Յառաջ» թերթի, Փարիզի Լուվրի բանգարանի հանդիսասրահում հունվարի 10-30-ը կայացել են համաշխարհային թերցումներ, ժառանգների ցուցադրումներ: Միջոցառումներից երկուսը նվիրվել է հայկական արվեստին, ցուցադրվել է Արտավազդ Փելեշյանի «Սկիզբը» կինոնկարը, մյուսը նվիրվել է 1915 թվականի Հայոց ցեղասպանությանը:

ՕՐՎԱԾՔԵՐ

Փետրվարի 2

- 1872 թ. մահացավ հայ բանաստեղծ եւ դրամատուրգ Պետրոս Դուրյանը:
- 1878 թ. ծնվել է հայ բանաստեղծ Վահան Թեքեյանը:
- 1882 թ. ծնվել է իռլանդացի գրող Ջեյմս Ջոյսը:
- 1889 թ. ծնվել է ամերիկացի ռեժիսոր եւ պրոդյուսեր Ֆրենկ Լլոյդը: 20-ական թթ. Լլոյդը մի շարք ֆիլմեր նկարահանեց, որոնց շնորհիվ էլ դասվեց համր կինոյի լավագույն վարպետների շարքը: Լլոյդը երկար տարիներ ամերիկյան կինոարվեստի եւ գիտության ակադեմիայի վարչության քարտուղարն էր, որը շնորհում է ամենամյա «Օսկար» մրցանակները:
- 1785 թ. ծնվեց իտալացի երգչուհի Իզաբելա Կոլբրանը: Ծննդով իսպանուհի Իզաբելան Ոստինիի կինն էր:
- 1910 թ. ծնվել է հայ գրող Հրաչյա Քոչարը: Նրա առաջին ակնարկները եւ պատմվածքները լույս տեսան 1930 թ., սակայն ճանաչման նա հասավ մի քանի տարի անց՝ «Վահան Վարդանյան» վիպակի հրատարակվելուց հետո: Ընթերցողների առանձնահատուկ սիրուն արժանացան «Մեծ տան զավակները» վեպը եւ «Սոփեսակ գիրքը» գրքի վերջին ստեղծագործությունները:
- Հին հայկական տոմարով Արաց ամսվա հրանտ օրն է:
- ՊԱՀՔ

ՆԱՐԳԻԶ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Հայաստանի հավաքականի երկրորդ փորձամրցումը

Երկուշաբթի օրը Կիպրոս մեկնեց ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը: Աֆրոդիտեի կղզում մեր ընտրանին հանդես կգա միջազգային մրցաշարում, ինչը ուժերի լավ ստուգատես կլինի աշխարհի առաջնության աշնանը սկսվող ընտրական մրցումներից առաջ:

Մրցաշարում հանդես կգան եվրոպական ութ երկրների հավաքականներ, որոնք նախապես բաժանված են երկու խմբի: Ահա դրանց կազմերը. «Ա» խումբ. Ռումինիա, Սլովակիա, Վրաստան, Լատվիա, «Բ» խումբ. Կիպրոս, Լիտվա, Մոլդովա, Հայաստան: Խաղերը կանցկացվեն Կիպրոսի չորս քաղաքներում Նիկոսիա, Լիմասոլ, Լառնակա, Պաֆոս: Բավականին հետաքրքիր է մրցումների խաղակարգը: Առաջին տուրում կհանդիպեն Ռումինիա-Լատվիա, Սլովակիա-Վրաստան, Կիպրոս-Լիտվա, Հայաստան-Մոլդովա զույգերը: Նույն խմբում հաղթող թիմերը կմրցեն իրար հետ, պարտվողները իրար հետ (նկատենք, որ խաղերը ոչ-ոքի ավարտվելու դեպքում հաղթողները կորոշվեն լրացուցիչ 11 մ հարվածների օգնությամբ): Երկու խմբերի միանման արդյունքներ ցույց տված թիմերը կհանդիպեն իրար հետ: Այսպիսով, թիմերը կանցկացնեն երեքական խաղ, փետրվարի 2-ին, 4-ին եւ 6-ին:

Հայաստանի հավաքականն իր առաջին հանդիպումը կանցկացնի Լառնակայում, Մոլդովայի հավաքականի հետ: Այնուհետեւ մեր ընտրանին կմրցի Կիպրոսի կամ Լիտվայի հետ: Հուսանք, որ գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանի գլխավորած հավաքականը հաջող ելույթներ կունենա Կիպրոսի խաղադաշտերում:

Մարզասերներին հիշեցնենք, որ սա Հայաստանի ընտրանու արդեն երկրորդ մրցելույթն է: Հունվար ամսին հանրապետության գլխավոր թիմը ողեւորվեց ԱՄՆ, որտեղ ընկերական երկու խաղ անցկացրեց: Մեր ֆուտբոլիստները նախ ոչ-ոքի (1-1) ավարտեցին հանդիպումը Գվատեմալայի հավաքականի հետ, ապա պարտվեցին (1-3) ԱՄՆ-ի օլիմպիական հավաքականից: Նշենք նաեւ, որ հավաքականն այդ մրցաշրջանի մեկնել էր առանց հիմնական կազմի 6-7 խաղացողների: Այս անգամ, Ռուսաստանի ակումբային թիմերի ղեկավարների հետ բանակցություններից հետո, հնարավոր եղավ հավաքականը համալրել ուժեղագույններով, թեեւ ոչ բոլորին հաջողվեց ներգրավել Կիպրոս մեկնող թիմում: Ինչեւէ, մեր հավաքականը միջազգային մրցաշարում հանդես կգա հետեւյալ կազմով. դարպասպահներ՝ Ռոման Բերեզովսկի («Զենիթ», Սանկտ Պետերբուրգ), Հարություն Աբրահամյան («Արարատ», Երեւան), պաշտպաններ՝ Վարդան Խաչատրյան («Ռուբին», Կազան), Սարգիս Հովսեփյան («Զենիթ»), Արթուր Սկրտչյան («Կոիլյա Սովետով», Սամարա), Կարեն Դոխոյան, Կարեն Սիմոնյան, Ռոմիկ Խաչատրյան (բոլորը՝ «Ցեմենս», Արարատ), կիսապաշտպաններ՝ Արթուր Պետրոսյան, Արարատ Հարությունյան (երկուսն էլ՝ «Շիրակ», Գյումրի), Տիգրան Պետրոսյանց («Կոիլյա Սովետով»), Գագիկ Մանուկյան, Արամ Հակոբյան, Ռաֆայել Նազարյան (բոլորն էլ՝ «Ցեմենս»), Արտավազդ Քարամյան («Կիլիկիա», Երեւան), հարձակվողներ՝ Արա Հակոբյան («Ալանիա», Վլադիկավկազ), Արման Քարամյան («Կիլիկիա»):

Համեստ մրցելույթներ Մինսկում

Մինսկում տեղի ունեցավ ազատ ոճի ըմբշամարտի խոշոր մրցաշար, որը նաեւ Սիդնեյի օլիմպիական խաղերի համար վարկանիշային միավորներ էր տալիս հաջող հանդես եկած մասնակիցներին:

Բելառուսի մայրաքաղաքում անցկացված մրցումներին մասնակցեցին նաեւ Հայաստանի չորս ըմբիշներ, սակայն նրանք սպասվածից ցածր արդյունքներ ցույց տվեցին: Մրցաշարում աչքի ընկած մասնակիցները ցարգեւատրվում էին լեգենդար ըմբիշ, օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն Ալեքսանդր Մեդվեդի մրցանակներով, սակայն դրանցից ոչ մեկը բաժին չհասավ մեր մարզիկներին:

Բավականին անհաջող մրցելույթ ունեցավ մեր չորս ըմբիշներից ամենաշիտղոսավորը՝ Ասլանբեկ Օլիմպիադայի արծաթե մեդալակիր Արմեն Սկրտչյանը: Մրցելով 54 կգ քաշային կարգում նա բավարարվեց cաս հաստատ արդյունքով. գրավեց միայն 14-րդ տեղը: Հայաստանի մյուս ներկայացուցիչների արդյունքներն այսպիսին են. Արշակ Հայրապետյանը (63 կգ քաշային կարգ) գրավեց 8-րդ, Հաբեթնակ Կուրղինյանը (76 կգ) 5-րդ, Մամեդ Աղաեւը (85 կգ) 4-րդ տեղը:

Այժմ մեր ըմբիշներին սպասում են եւս մի շարք ընտրական մրցաշարեր, որոնցում նրանք կարող են վարկանիշային միավորներ եւ օլիմպիական ուղեգրեր ձեռք բերել: Հիշեցնենք, որ առայժմ Սիդնեյ-2000-ում հանդես գալու իրավունք ունեն մեր հանրապետության ազատ ոճի ըմբիշներից երկուսը՝ աշխարհի եռակի չեմպիոն Արա Գեւորգյանը եւ Մարտին Բերբերյանը:

Չեմպիոնը Շվեդիայի հավաքականն է

Խորվաթիայում անցկացվեց ձեռքի գնդակի եվրոպայի տղամարդկանց հերթական առաջնությունը, որին աշխարհամասի 12 ուժեղագույն հավաքականներ մասնակցեցին: Նրանք սկզբում մրցեցին երկու խմբերում, որտեղ առաջին երկու տեղերը գրաված թիմերն այնուհետեւ շարունակեցին պայքարը չեմպիոնի կոչման, ինչպես նաեւ մրցանակային տեղերի համար:

Կիսաեզրափակիչներից մեկում Ռուսաստանի հավաքականը վստահ հաղթանակ տարավ Ֆրանսիայի ընտրանու նկատմամբ, հաշիվն է 30-23: Անհամեմատ ավելի համառ էր երկրորդ կիսաեզրափակիչ խաղը: Այստեղ Շվեդիայի հավաքականը մեծ դժվարությամբ՝ 23-21 հաշվով, հաղթեց Իսպանիայի հավաքականին:

Այսպիսով, վճռական խաղում հանդիպեցին վերջին տարիների բոլոր խոշորագույն մրցաշարերի ֆավորիտները՝ Ռուսաստանի եւ Շվեդիայի հավաքականները: Այս հանդիպումը չափազանց լարված բնույթ ունեցավ: Առաջին խաղակեսում ակնհայտ էր ռուսների առավելությունը, որոնք առջեւում էին 15-9 հաշվով, սակայն շվեդները կարողացան շտկել դրությունը, եւ հանդիպման հիմնական ժամանակն ավարտվեց ոչ-ոքի՝ 24-24: Առաջին լրացուցիչ խաղափուլը եւս առավելություն չտվեց կողմերից ոչ մեկին՝ 27-27: եվ միայն երկրորդ լրացուցիչ խաղափուլում շվեդները կարողացան խաղն ավարտել իրենց օգտին՝ 32-31: Այո, չափազանց դրամատիկ պայքարում Շվեդիայի հավաքականը նվաճեց եվրոպայի չեմպիոնի կոչումը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՍԿՍՆԱՎՈՐ

Արծաթե մեդալները բաժին հասան Ռուսաստանի մարզիկներին, իսկ բronզե պարգեւները նվաճեցին Իսպանիայի հավաքականի անդամները, որոնք երրորդ տեղի համար խաղում 24-23 հաշվով պարտության մատնեցին Ֆրանսիացիներին:

34-րդ խաղարկությունը

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՍԿՍՆԱՎՈՐ

Ասլանբեկ Խաղաի գլխավոր՝ «Սայ Դոում» մարզադաշտում տեղի ունեցավ թվով 34-րդ «Սուպեր բոուլը»՝ ամերիկյան ֆուտբոլի առաջնության եզրափակիչ մրցախաղը: Հանդիպեցին մրցաշրջանի լավագույն թիմը՝ «Սենթ Լուիս Ռեմսը» եւ «Թենեսի Թայդոնը»:

Հենց սկզբից՝ սենթլուիսցիները տիրեցին նախաձեռնությանը եւ առաջ անցան հաշվի մեջ 16-0: Հետագայում մրցակիցները կարողացան որոշ բեկում մտցնել խաղի մեջ, բայց ավելին անել նրանց չհաջողվեց: «Սենթ Լուիս Ռեմս» թիմը հաղթեց 23-16 հաշվով եւ առաջին անգամ տիրեց ամերիկյան ֆուտբոլի գլխավոր մրցանակին:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԹԵՆԻՍ

Հաղթեցին Աղասին եւ Դեւենպորտը

Մելբուռնում անցկացվեց «Մեծ սաղավարտ» շարքի չորս մրցաշարերից առաջինը՝ Ավստրալիայի բաց առաջնությունը:

Շատ սուր պայքարում ընթացավ տղամարդկանց եզրափակիչ խաղը, որտեղ մրցեցին ամերիկացի Անդրե Աղասին եւ նախորդ առաջնության հաղթող, ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովը: Մեկնարկը հուսադրող էր ռուս թենիսիստի համար. նա առաջին խաղափուլը շահեց 6-3 հաշվով: Հետագայում Աղասին խլեց նախաձեռնությունը եւ շահեց հաջորդ երեք խաղափուլերը՝ 6-3, 6-2, 6-4: Այսպիսով, աշխարհի ուժեղագույն թենիսիստը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում հաղթող դարձավ 6-րդ անգամ: Հենց նա էլ այժմ գլխավորում է պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի հրապարակած վարկանիշային աղյուսակը:

Համառ պայքար էր ակնկալվում կանանց մենախաղերի վճռական հանդիպման ժամանակ: Այստեղ գլխավոր մրցանակը վիճարկեցին աշխարհի առաջին եւ երկրորդ թենիսուհիներ Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա) եւ Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ): Հինգիսը մինչ այդ երեք անգամ անընդմեջ հաղթել էր Ավստրալիայի բաց առաջնությունում, բայց այս անգամ նա իր հնարավորություններից փոքր-ինչ ցածր հանդես եկավ: Ավելի

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՍԿՍՆԱՎՈՐ

ճիշտ կլինի ասել, որ նրան իր խաղաոճը թելադրեց մրցակցուհին. իրոք՝ Դեւենպորտը հանդես եկավ վերելքով ու հաղթեց 6-1, 7-5 հաշվով: Սա ամերիկացի թենիսիստուհու թվով երրորդ առաջին մրցանակն է «Մեծ սաղավարտ» շարքի մրցումներում:

Անտարբերելի ավարտ ունեցան տղամարդկանց զուգախաղերը: Հաղթողի հավակնորդ երկյակները եզրափակիչ տանող ճանապարհին պարտվեցին ու դուրս մնացին պայքարից: Մրցանակը շահեցին Ռիկ Լիչը (ԱՄՆ) եւ Էլիս Ֆերեյրան (ՀԱՀ), որոնք 4 ժամ տեւած ծանր պայքարում հաղթեցին Էնդրյու Կրաքցման (Ավստրալիա)-Ուեյն Բլեք (Զիմբաբվե) զույգին՝ 6-4, 3-6, 6-3, 3-6, 18-16: 5-րդ՝ վճռական խաղափուլի հաշիվն անտարբեր է:

Մրցումներում երկրորդ անգամ գավաթի արժանացավ ավստրալուհի Ռենե Սթաբզը: Նա ամերիկուհի Լայզա Ռեյմոնդի հետ հաղթել էր կանանց զուգախաղերում: Այս անգամ Ստաբզը եւ ամերիկացի Ջարեդ Պալմերը Ավստրալիայի չեմպիոններ դարձան խառը զույգերի մրցաշայքում: եզրափակիչում նրանք պարտության մատնեցին Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)-Թոդ Վուդբրիջ (Ավստրալիա) երկյակին՝ 7-5, 7-6:

ՍԿԱՆԿՈՐԴ



Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Փարիզ: 2. «Ասլանբեկ»: 3. Շամոն: 4. Բլինդ: 7. Իհարա: 8. «Նիվա»: 9. Կոդա: 14. Իսո: 15. Տերասաս: 16. Գոլովկո: 18. Մաս: 19. Բիլիչ: 21. «Երեւան»: 23. «Վան»: 24. Շոլ: 28. Իզլ: 29. Ղազարյան: 31. Սնո: 33. Կրաուս: 34. Որակ: 36. Իոդոն: 37. Նեսսա: 38. «Սեդան»: 40. Ալբեր:

Հորիզոնական

4. Բա: 5. Խաչատրյան: 6. Լի: 10. Միկի տին: 11. Տոնոյան: 12. Օնո: 13. Դիաս: 17. Լամա: 20. Բելանով: 22. Տիտով: 24. «Շտուտ»: 25. Աֆյան: 26. «Բորդո»: 27. Սիզին: 30. Լավալ: 32. «Ճամայկա»: 33. Կլոս: 35. «Լիոն»: 39. «Ջազ»: 41. Տաֆարել: 42. Ալֆոնսո: 43. Սե: 44. «Սանտանդեր»: 45. Չա:

ԱԶԳ

Օրվա հետքով

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Միջին Արևելքում անորոշ իրավիճակ է

Ամորոշ ժամանակով Սիրիա-իսրայելական երկխոսության առկախման բերումով մասամբ խառնվել են միջինարևելյան խաղաղ կարգավորման գործընթացի խաղաթղթերը: Նկատելի առաջին վերադասավորումն էր, որ Թել Ավիվի բանակցային կշիռը սիրիականից տեղափոխվեց պաղեստինյան շավիղ, որտեղ հունվարի 30-ից մեկնարկել են «մարաթոնային» բանակցություններ մինչեւ փետրվարի կեսը, ուղեծրային համաձայնագրի հասնելու նպատակով: Իսրայելական նման մարտավարությունը նպատակ ունի պատռանք ստեղծել, թե որոշ կողմի հետ առկա է առաջխաղացում ի հաշիվ մյուսների դրանով իսկ առավել զիջումներ կորզելով հակառակորդներից:

Տարակուսանք է առաջացնում նաեւ փետրվարի 1-ին Մոսկվայում կայանի կոչված միջինարեւելյան եւ հյուսիսաֆրիկյան բազմակողմ բանակցությունների համաժողովը: Այս միջոցառման հրավիրումը տարակուսելի է այն պատճառով, որ դեռեւս որեւէ շոշափելի առաջընթաց չի արձանագրվել խաղաղական երկկողմ բանակցություններում, որոնք բազմակողմի հետ մեկտեղ սառեցվել էին 1996 թ-ից, երբ Իսրայելում իշխանության գլուխ եկավ Նաթանյահուի ղեկավարած «Լիկուդը»: Իմիջիայլոց, Դամասկոսն ու Բեյրութն սկզբանե բոյկոտել են բազմակողմ բանակցությունները եւ դրանց մասնակցելը պայմանավորել են համապարփակ եւ արդար խաղաղության հասնելով:

Սիրիա-իսրայելական երկխոսության ընդհատման հետեւանքով թեժացել է նաեւ լիբանանա-իսրայելական ճակատը: «Հզբոլահի» ազատագրական պայքարը որակյալ հաջողության է հասել ընդդեմ իսրայելական զորքերի եւ նրա դաշնակիցների: Հունվարի 30-ին սպանվել է այսպես կոչված «Հարավլիբանանյան բանակի» գլխավոր հրամանատարի տեղակալ, գնդապետ Ակլ Հաշեմը: Այնուհետեւ լուրջ կորուստներ է կրել նաեւ իսրայելական բանակը, ինչն իրարանցում է առաջացրել եբրայական պետության թե պաշտոնական եւ թե ժողովրդական շրջանակներում:

Հետեւաբար թվում է, թե հոդս է ցնդում այն լավատեսությունը, որ ի հայտ էր եկել անցյալ դեկտեմբերին Սիրիա-Իսրայել երկխոսության վերսկսման ժամանակ: Դժվար կացության մեջ է ամերիկյան վարչակազմը, որն առաջիկա օրերին տարածաշրջան է գործուղելու իր դիվանագիտության ճարտարապետ Օլբրայթին, քանի դեռ խաղաղ կարգավորման գործընթացը վերջնականապես դուրս չի եկել Վաշինգտոնի ափերից:

Ա. ՄՈՎՍԵՍՅԱՆ

ԱՆԿԱՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայոց լեզվի ու գրականության ամբիոն «վաղուց պետք է բացվեր»

Ինչպես անդրադարձել էինք «Ազգում», Անկարայի համալսարանում բացվեց հայոց լեզվի ու գրականության ամբիոն: Թուրքական ու թուրքահայ թերթերը տեղեկացնում են, որ այդ ծրագիրը վաղուց գոյություն է ունեցել, սակայն հետաձգվել է «ծանոթ» պատճառներով: 5 տարի առաջ, ըստ համալսարանի ռեկտորի օգնական, դոկտոր, պրոֆեսոր Ալի Էրման Էթեի, ուսանողներ Սեյիդ Սերչելիին ու Բիրսեն Քարաչային ուղարկել են Ռուսաստան դոկտորական թեզեր պաշտպանելու հայոց լեզվից եւ գրականությունից: Բ. Քարաչան վերադարձել է արդեն, իսկ Ս. Սերչելիը շուտով կավարտի իր թեզի պաշտպանությունը Սանկտ Պետերբուրգի համալսարանում եւ գործի կանցնի նորաբաց ամբիոնում: «Այսպիսի ամբիոնը վաղուց պետք է բացված լիներ, սակայն հայտնի պատճառներով անտեսված էր: Հարկավոր է արդեն անտեսումը սրբագրել», հայտնեց Անկարայի համալսարանի ռեկտորի օգնականը: Ապա դոկտ. Էթեն հույս հայտնեց, որ Երեւանի համալսարանի հետ համագործակցության գաղափարը հաջողություն կունենա: Այդ նպատակով Քարաչան մտադիր է այցելել Երեւան ու պետական համալսարանի թուրքագիտության ամբիոնում հետազոտական աշխատանքներ ծեռնարկել:

Հիշեցնենք, որ տարիներ շարունակ Հայաստանի ու սփյուռքի քաղաքական կյանքի պատմությանը նվիրված բազմաթիվ գրքեր էին լույս ընծայվել Անկարայի համալսարանի թուրք եւ օտար դասախոսների կողմից, սակայն հայոց լեզվի ու գրականության ամբիոնի բացումը քաղաքական ու տնտեսական բազմաթիվ «անսպասելի» քայլերի հետ ցույց է տալիս ներքին ու արտաքին ճնշումների ազդեցությամբ Թուրքիայի արտաքին քաղաքականության որոշ փոփոխություններ:

Հ. ՄՈՍԿՈՓՅԱՆ

Երկրաշարժը կարելի է կանխատեսել մեկ օրվա ճշգրտությամբ

ՄՈՍԿՎԱ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՏՆՏԲ: Սեյսմիկ ալիքները կարելի է կանխատեսել 1 օրվա ճշգրտությամբ: Այդ մասին հունվարի 31-ին հայտարարել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի երկրի մագնետիզմի, իոնոսֆերայի եւ ռադիոալիքների տարածման ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Վիկտոր Օռաեւսկին: Առաջիկա երկու տարում ուղեծիր կհանվի նոր «Պրեդվեստնիկ» հատուկ սարքը, որի օգնությամբ գիտնականները հույս ունեն յուրացնել երկրաշարժերի կանխատեսման նոր եղանակներ: Դեռեւս 70-ական թվականներին Ինստիտուտի գիտնականները, վերլուծելով իոնոսֆերան հետազոտող արբանյակների տվյալները, հայտնաբերեցին հետաքրքիր երեւույթ: Զգայուն սարքը գրանցել էր իոնոսֆերայի անոմալիաներ, որոնք ծագում են երկրի այն շրջաններում, որտեղ մոտավորապես մեկ օր անց տեղի է ունենում երկրաշարժ: Թվում էր, թե ուր որ է կկատարվի դարի հայտնագործությունը, որը մարդկությանը թույլ կտա 1 օրվա ճշտությամբ կանխատեսել սեյսմիկ աղետները: Ավանդական ցամաքային սեյսմոլոգիայի տեսանկյունից դա անիրականանալի երազանք էր թվում: Սակայն գիտական ենթադրությունները հաստատելու համար հետազոտման նյութերն անբավարար էին: Այժմ այդ երազանքն իրականություն է դառնում:

Բաց հասարակության ինստիտուտի
օժանդակության հիմնադրամ
Հայաստան

ԲՀԻ օժանդակության հիմնադրամը
հայտարարում է

Մրցույթ

բժիշկների միջեւ Զալցբուրգում կայանալիք սեմինարին մասնակցելու համար: Սեմինարը տեղի կունենա 2000 թ. մարտի 4-10-ը «Մոր եւ մանկան առողջությունը» մասնագիտության գծով: Անգլերենի իմացությունը պարտադիր է:
Դիմումներն ընդունվում են մինչեւ 2000 թ. փետրվարի 10-ը, ժամը 16:30-ը:
Մանրամասն տեղեկությունների եւ դիմումի նյութերի համար դիմել ԲՀԻ օժանդակության հիմնադրամ հետեւյալ հասցեով Երեւան, Այգեձոր 53բ, հեռ. 272119, 271713:

USAID
USAID

AED
Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա **փետրվարի 4-ին, ժամը 11:30-ին,** Թեֆեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն
ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության ներդրումների գլխավոր վարչության պետ

Վիկտորիա Տեր-Նիկողոսյանը

«Կարիտաս փայտամշակման կենտրոն» հայ-շվեյցարական համատեղ ձեռնարկության նախագծի ղեկավար

Պետեր Ցբինդեն

«Արտասահմանյան ներդրողների համագումար» հասարակական կազմակերպության նախագահ

Վարուժան Կուզուկյանը

Թեման «ՀՀ ներդրումային քաղաքականությունը»:

Դասախոսությունից հետո կկազմակերպվի այցելություն «Կարիտաս փայտամշակման կենտրոն» հայ-շվեյցարական ՀՁ:

ՀԵՌԱՏԵՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2 փետրվար

1
9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Հեռուստասերիալ «Ռեյնի Մանի ֆեստը»
11.00 Գ/Ֆ «Դուք նամակ ունեք»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սուլտֆիլմեր «Բումը, Բիմը, Բոմը եւ գայլը», «Հավամրգու մեղր», «Գյուտարար գայլը»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Առողջ» լոտո
19.50 Պարմանի
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Պրեմիերա
22.00 Գ/Ֆ «Յուրաքանչյուր կնոջը երազանքը»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս
9.05 Վաղ առավոտյան
10.00, 18.20 Սուլտֆիլմ
10.10 Պուլ-պուլ
10.40 Սենյակ
11.15 Բնության արգելանոցներ. Գրելանդիա
11.40 Ծանոթ-անծանոթը
12.00, 18.05, 20.30, 23.45 Լուրեր
18.45 Հայկական ժողովրդական համերգ
19.05 «Օլիվ ամրոցը»
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 Մոսկվան եւ ընկ.
21.20 Գ/Ֆ «Քաղաքացիական հայց»
23.10 Ուշ երեկոյան

9
9.00 Տոմար
11.00 Ավետսա (կրկնություն)
11.20 Ասպարեզ (կրկնություն)
19.00 Շղջիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.00 Գիսաստղ
20.30 Կամ... կամ
21.15 Սուլտֆիլմեր
22.00 Քրոնիկոն
22.10 Վ/Ֆ «Կանխագուշակություն»
24.00 Զրո ժամ
00.05 Սուք սենյակ
00.30 Ֆասոն
1.00 Գ/Ֆ «Սեւազգեստ մարդիկ» (ավարտին Սուրհանդակ)

1
7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Սուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.40 Հրաշալի ընկերախումբ
17.05 Զունգլիների կանչը
17.25 ... Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ-տոու
19.55 Մարդը եւ օրենքը
20.50 Սերիալ «Տոկուն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Արջամկան օրը» (դերերում Բ. Մյուրեյ, Է. Մակդաուել, ԱՄՆ, 1993 թ.)
00.50 Քաղաքակրթություն
01.25 Նորություններ
01.40 Գ/Ֆ «Ֆրիքին եւ Բոբը» (դերերում Ա. Արթին, Դ. Քաան, Լ. Սուիթ, Վ. Հարեր, ԱՄՆ, 1974)

РТР
7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանմունք
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արեւնատորս»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
12.55 Սուլտֆիլմեր
13.00 Իմ XX դարը
13.25 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց քաղաք»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Սուլտսերիալ «Գաղտնի գործակալները»
18.20 Ուշարակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը 2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 Ինդ Լեգ ռեժիսոր
22.45 Կինոյի ժամ. Ջեքի Չանը «Ա» նախագիծը» ֆիլմում (Հոնկոնգ)
00.40 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանմունք
00.55 «Ա» ծրագիր
02.20 Թեժ տասնյակ
03.15 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՌ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1191 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 1.02.2000 Գինը 100 դրամ